

ԶԻՆԱՍՏԱՆ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ
ՊԷՏՔ Է ԳՈՐԾԵՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԲԱՅԱՌԵԼՈՎ

Զինաստանն ու Միացեալ Նահանգները պետք է առաջնորդուին մեր երկիրներուն միջեւ հակամարտութիւններու եւ առճակատման բացառման սկզբունքով: Այս մասին Միացեալ Նահանգներու մէջ նախագահ Տանըլտ Թրամփի հետ հանդիպման ընթացքին ըսած է Զինաստանի նախագահ Շի Ժինփինկ:

«Վստահ եմ՝ կը գտնենք ճիշդ ուղի, որպէսզի 2 գերտերութիւնները կառողանան խաղաղօրէն գոյակցիլ այս մոլորակին վրայ», յայտնած է ան:

ԱԿՆԱՐԿ

ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ
ԵՒ
ՓՈԽԿԱՊԱԿՑՈՒՄՆԵՐ

Երեւան-Անգարա երկխօսութեան արդիւնաւորման համար Անգարայի դասական նախապայմանները նախապէս կ'ամփոփուէին երեք կէտերու մէջ.

- Ա.- Զայակական ուժերու հեռացում Արցախի տարածքներէն եւ հակամարտութեան լուծում՝ Ազրայէյճանի տարածքային ամբողջականութեան շրջագծին մէջ մէջ,
Բ.- Զայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումի աշխատանքներու դադրեցում,

Գ.- Յատուկ պայմանագիրով Թուրքիոյ տարածքային ամբողջականութեան եւ ընդհանուր սահմաններու ճանաչում:

Այս նախապայմանները վերափոխուած են. թուրքեւ-ազրայէյճանական միացեալ դաշինքը, դերերու բաժանումով, կ'արծարծէր այլ նախապայմաններ, որոնցմէ ամենէն առաջնայիններն են.

- Ա.- Չանգեզուրի միջանցք,
Բ.- Սահմանադրութեան փոփոխութիւն,
Գ.- Դատական հայցերու յետս կոչում:

Կարելի է արձանագրել, որ նախապայմանները կատարուած են՝ Արցախի այսօրուան իրավիճակը, Զայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը Երեւանի արտաքին քաղաքականութեան առաջնային օրակարգ չնկատելը, Զայաստանի Զանրապետութեան յայտարարուած տարածութեան ղուրս հայապատկան որեւէ տարածքի պահանջէն եւ Ազրայէյճանի դեմ միջազգային ատեաններու մօտ յարուցուած դատերէն հրաժարիլը, Սահմանադրութիւնը փոխելու եւ Անկախութեան հռչակագիրը սահմանադրագրծելու մասին պաշտօնապէս յայտարարելը պարզապէս քանի մը փաստ են նախապայմաններու կատարումին:

Արցախի հարցի այս կերպ լուծարումը իբրեւ նախապայման, սկզբունքով պէտք էր բաւարար նկատուած ըլլար Անգարայի կողմէ՝ դասական նախապայմաններու ամբողջութիւնը կատարուած նկատելու եւ անցնելու սահմանի բացման գործընթացին: Այդպէս չէ սակայն: Զիմա Անգարան կը պայմանաւորէ այդ բոլորը Զայաստան-Ազրայէյճան խաղաղութեան պայմանագրի կնքումով: Իր հերթին, Ազրայէյճանը խաղաղութեան պայմանագիրը կը պայմանականացնէ Սահմանադրութեան փոփոխութեամբ:

Անգարան յստակօրէն Երեւանի հետ երկխօսութեան արդիւնաւորումը կամ սահմանի բացումը կը փոխկապակցէ Պաքոյի հետ համաձայնութեամբ: Զակառաջ անոր որ համաձայնութիւններ կը կայանան եւ այնպիսի մթնոլորտ կը յառաջացուի, որ սահմանի բացումը շատ մօտալուտ է, այդուհանդերձ գործընթացը կը մնայ սառած:

Զայաստանի Զանրապետութեան Անվտանգութեան խորհուրդի քարտուղարը հիմա, ըստ Էուքեան, կ'որդէգրէ Երեւան-Անգարան Երեւան-Պաքոյին կապելու Անգարայի մօտեցումը: «Զայ-թրքական յարբերութիւնները կը կապեն Զայաստանի Զանրապետութեան եւ Ազրայէյճանի միջեւ եղած գործընթացների հետ»: Այս յայտարարութեամբ Երեւանը ինք եւս փոխկապակցած կ'ըլլայ երկու գործընթացները: Այսինքն, Զայաստան-Թուրքիա սահմանը կը բացուի, երբ Ազրայէյճանի հետ կնքուի համաձայնագիրը: Իսկ Ազրայէյճանի հետ կը կնքուի համաձայնութիւն, երբ Զայաստան փոխէ իր Սահմանադրութիւնը: Երեւանը արդէն յայտարարած է Սահմանադրութիւնը փոխելու եւ Անկախութեան հռչակագիրը սահմանադրագրծելու մտադրութեան մասին:

«Ա.»

ՍԱՅԱԿ. «ԻՐԱՆ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷ
ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՄԲ ՎԵՐԱՀԱՍԿԵԼ
ՀՈՐՄՈՒՁԻ ՆԵՂՈՒՑԻՆ»

Զորմուզի ներուցը «երբեք պիտի չվերադառնայ իր նախկին վիճակին», եւ Իրան պիտի շարունակէ «ամբողջութեամբ կառավարել եւ վերահսկել» այս ջրային ուղին, յայտարարած է Իրանի գերագոյն հոգեւոր պետ Մոջթաբա Խամենէիի ռազմական հարցերով խորհրդական հազարապետ-գորավար Եահիա Ռահիմ Սաֆաւի:

Տեսանկիւթի մը մէջ, զոր հրապարակած են իրանական «Ֆարս» եւ «Թաս-նիմ» լրատու գործակալութիւնները, Սաֆաւի կը պնդէ, որ Իրանն ու Օմանը «համաձայնութեան եկած են ներուցի կառավարման եղանակին շուրջ, սակայն ամերիկացիները խոչընդոտած են զայն»:

Պատերազմէն առաջ Զորմուզով կը փոխարդուէր աշխարհի մէջ սպառող նաւթին եւ բնական կազին շուրջ 20 առ հարիւրը: Միջոցառ հիմա օրական շատ քիչ նաւեր կ'անցնին ներուցէն:



Գերագոյն հոգեւոր պետին խորհրդականը նշած է, որ Պարսից ծոցը եւ Կարմիր ծովը, ինչպէս նաեւ Զորմուզի ներուցն ու Պապ Մանտեպը իբրեւ փոխկապակցուած պատերազմի թատերաբեմ դիտարկելու Իրանի ռազմավարութիւնը հիմնովին պիտի փոխէ տագնապին բնոյթը:

Շար.ը՝ էջ 2

ՔՐԵՄԼԻՆ ՏԱԿԱԻՆ ԿԱՆՈՒԽ ԿԸ ՆԿԱՏԷ
«ՔՍԱՆՆԵՐՈՒ ԽՄԲԱԿ»-Ի ՎԵՀԱԺՈՂՈՎԻ
ԾԻՐԻՆ ՄԷՋ ՓՈՒԹԻՆ-ԹՐԱՄՓ
ՀԱՆԳԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ ԽՕՍԻԼԸ

Մեծ քսանեակի վեհաժողովի ծիրին մէջ Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու նախագահներ Վլատիմիր Փութինի եւ Տանըլտ Թրամփի հանդիպման մասին խօսիլը կանխահաս նկատեց Ռուսիոյ նախագահի բանքեր Տմիթրի Փեսքով:


«Տակաւին կանուխ է այդ մասին խօսելու, տակաւին որոշում չէ տրուած: Մենք իրօք երախտագիտութեամբ կ'ընդունինք այդ սիրալիր հրաւերը, կը գնահատենք զայն, բայց եւ այնպէս անկկա պէտք է սերտուի, անկէ ետք համաձայնեցուի, եւ պիտի տրուի համապատասխան որոշում», «Ինթըրֆաքս» լրատու գործակալութեան համաձայն, լրագրողներուն ըսած է Փեսքով:

Ան յայտարարած էր, որ Փութին պատրաստ է հանդիպելու Թրամփի հետ:

Ան յայտարարած է լրատւամիջոցներու ներկայացուցիչներուն ենթադրութիւնը, թէ ղեկտեմբերին Մայեմիի մէջ տեղի ունենալիք «Քսաններու խմբակ»-ի վեհաժողովին, որուն Ուաշինկթըն հրաւիրած է Ռուսիոյ նախագահը, հաւանական է Թրամփ-Փութին առանձին հանդիպում մը:

Անկի կանուխ Մոսկուայի բանքերը յայտարարած էր, որ Փութին պատրաստ է հանդիպելու Թրամփի հետ:

«ՔԱՂԱՔԱՅԻԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»-Ի ՊԱՏԳԱՄԱՌՆԵՐԸ
ԴՈՒՐՄ ԵԿԱՆ ԱՐՅԱԽՅԻՆԵՐՈՒՆ
ՀԱՐՅԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՔՆՆԱՐԿՈՒՄԷՆ,
ԵՐԲ ՅԻՇՈՒԵՅԱՆ ԱՐՅԱԽ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ



23 սեպտեմբերին Ազգային ժողովին մէջ տեղի ունեցաւ արցախցիներու ընկերային-տնտեսական եւ իրաւական խնդիրներուն վերաբերեալ քննարկում՝ կազմակերպութեամբ Ազգային ժողովի մարդու իրաւունքներու պաշտպանութեան յանձնախումբին, զոր կը ղեկավարէ ընդդիմադիր «Զայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լիլիթ Գալստեանը: Քննարկման ներկայ էին խորհրդարանական երեք խմբակցութիւններու պատգամաւորներ, նաեւ ներկայացուցիչներ պետական գերատեսչութիւններէն:

Քննարկման մեկնարկէն մօտ 20-30 վայրկեան անց «Քաղաքացիական պայմանագիր»-ի պատգամաւորներն ու կառավարութեան ներկայացուցիչները լքեցին Նիստերու դահլիճը, երբ յիշատակուեցան Արցախի պետական մարմինները, օրինակ, խորհրդարանական խմբակցութիւնները:

Արդարեւ, քննարկման մեկնարկին Գալստեան յայտարարեց, որ Նիստին

ներկայ են Արցախի խորհրդարանական խմբակցութիւնները՝ ներկայացնելով նաեւ անոնց ղեկավարներուն անունները:

«Քաղաքացիական պայմանագիր»-ի պատգամաւորները իբրեւ հեռանալու պատճառ նշեցին քննարկման ընթացքին հնչած ձեւակերպումները՝ մասնաւորաբար՝ «Արցախի խորհրդարանի ներկայացուցիչներ», «Արցախի խմբակցութիւնները՝ ներկայացնող պատգամաւորներ» եւ նման այլ արտայայտութիւններ:

Աշխատանքի եւ բարեկեցութեան յանձնախումբի փոխնախագահ, «Քաղաքացիական պայմանագիր»-ի պատգամաւոր Մարիամ Պողոսեան յայտարարեց, որ իրենք բազմիցս յայտնած են, թէ Զայաստանի մէջ երկրորդ պետութիւն չեն հանդուրժեր, հետեւաբար յայտարարութիւնը, թէ՛ «ներկայ են Արցախի պաշտօնականները», իրենց համար անընդունելի է:

Շար.ը՝ էջ 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՊԻՏԻ
ԳՈՒՄԱՐՈՒԻ ՀՅԳ ՀԱՅ
ԴԱՏԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ



Զայաստանի մէջ 25-28 սեպտեմբերին պիտի գումարուի ԶՅԴ Զայ դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու համահայկական խորհրդածողովը: ԶՅԴ Բիւրոյի հրաւիրած համահայկական այս հաւաքին պիտի մասնակցին շուրջ քսան երկիրներէ ժամանած՝ ԶՅԴ Զայ դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու պատասխանատուներ, ինչպէս նաեւ ԶՅԴ կուսակցական մարմիններու ներկայացուցիչներ:

Խորհրդածողովի նպատակն է գնահատել կառոյցներուն նախընթաց աշխատանքները, քննարկել ու համադրել յառաջիկայ գործողութիւններու հիմնական ուղղութիւնները, ինչպէս նաեւ կատարել մարտավարական որոշակի վերանայումներ:

Օրակարգի առանցքին մէջ Զայաստանի Զանրապետութեան եւ առիասարակ հայ ժողովուրդին առջեւ ծառացած արտաքին քաղաքական հիմնական մարտահրաւերներուն քննարկումն է եւ անոնց յաղթահարման գործին մէջ Զայ դատի համակարգի ներուժի նպատակային օգտագործումը:

Խորհրդածողովի պաշտօնական բացման արարողութիւնը տեղի կ'ունենայ 25 սեպտեմբերին, ժամը 12:00-ին, «Էլիթ փալատ» կեդրոնի «Մանթաշով» սրահին մէջ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԷ «ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ
ՋԵԿՈՒՑՈՒՄԸ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԿԸ ՀԱԿԱԳԱՐՁԷ



Երեկ հրապարակուած է «Զայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ մէջ յառաջացած ճգնաժամի եւ լուծման ուղիներուն մասին» զեկուցումը: Անկկա կազմուած է Զայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի յանձնարարութեամբ, որ անցեալ տարուընէ կը փորձէ գահէն հեռացնել Ամենայն հայոց Կաթեգին Բ. Կաթողիկոսը՝ ներկայացնելով շարք մը լուրջ մեղադրանքներ:

Վարչապետի աշխատակազմին մաս կազմող Զանրային կապերու եւ տեղեկատուութեան կեդրոնին զեկուցումը կ'առաջարկէ ճգնաժամի յաղթահարման հինգ քայլէ բաղկացած ճամբու քարտէս.

- 1.- Բարեկարգման օրակարգի վերայաստակացում եւ հանրահռչակում,
 - 2.- Զայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ փաստացի պետի հեռացումը (հանգստեան կոչուիլը),
 - 3.- Կաթողիկոսական տեղապահի ընտրութիւն,
 - 4.- Զայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ միասնական կանոնադրութեան ընդունումը,
 - 5.- Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութիւն:
- «Սոյն զեկուցումը չի վիճարկեր եկեղեցւոյ դաւանաբանական հիմքերը, սրբազան աւանդութիւնը եւ կանոնական կարգը: Զակառաջ՝ ան կը փաստագրէ Նոյնինքն այդ հիմքերու խախտումները՝ ի պաշտպանութիւն եկեղեցւոյ ինքնութեան եւ ինքնավարութեան», նշուած է յայտարարութեան մէջ:
- Չեկուցումին մէջ փաստագրուած են 16 կէտեր, որոնցմով, ըստ գործադիր իշխանութեան, կ'արտայայտուի ճգնաժամը:
- Անոնց շարքին են.
- Կուսակրօնութեան ուխտի խախտումը եւ բարեկարգութեան խախտումներու անպատժելիութիւնը,
 - հոգեւորականներու կամայական հետապնդումները եւ կարգալուծութիւնները,

Շար.ը՝ էջ 2

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ԱՊՐՈՒՍԻ ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑԵՐԸ ԱՌԱՆՅՔԸ ԿԱԶՄԵՑԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԺՈՁԵՖ ԱՌԻՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒՆ



Հանրապետության նախագահ Ժոզեֆ Առն երեկ Պապատայի պալատին մեջ անջատ հանդիպումներ ունեցավ գանազան շրջաններու պատասխանատուներու հետ: Հանդիպումներուն ընթացքին առանցքային կարեւորութեամբ պարզուեցան երկրի ընկերային եւ տնտեսական հրատապ հարցերը:

Այս ծիրին մէջ Ընկերային, տնտեսական ու կենսոլորտի խորհուրդի նախագահ դոկտ. Շարլ Արպիտ ահագանգ հնչեցուց Լիբանանի մէջ տիրող ընկերային ու ապրուստի մտահոգիչ կացութեան գծով: Նախագահ Առնին ներկայացուցած իր յուշագիրին մէջ Արպիտ՝ պարզելով տիրող իրավիճակի հրատապ հարցերը, թուեց կարգ մը կանխարգելիչ առաջարկներ՝ կարենալ դիմակայելու համար երկրի ընկերային եւ տնտեսական առկայ ու նախատեսուող դժուարութիւնները: «Լիբանանին սպառնացող ապահովական ու ռազմավարական վտանգին հետ մրցող իրավիճակ» որակեց դոկտ. Արպիտ երկրի ընկերային եւ տնտեսական իրավիճակը:

Նախագահ Առն Զաիէի յոյն ուղղափառ թեմի եպիսկոպոսական փոխանորդ Սիքրել Յաքիմ արքեպիսկոպոսին հետ ըննեց այս շրջանի հրատապ հարցերը:

Նոյն ծիրին մէջ նախկին երեսփոխաններ Սալեհ եւ Քազեմ Խէյր երեկ այցելեցին Պապատայ, ուր նախագահ Առնի հետ արծարծեցին հիւսիսի, յատկապէս՝ Մընիէ շրջանի այժմու իրավիճակը: Այս առիթով նախկին երեսփոխան Սալեհ Խէյր նախագահին նուիրեց անցեալի իր գործունեութեան առնչուող իր հեղինակած «Երամեն դուրս սաւառնող թռչունը» խորագրեալ գիրքը:

Միւս կողմէ, նախագահ Առն երեկ ընդունեց Նաե Լիբանանի գեղեցկութեան թագուհի Փըրլա Յարպը, որ վերջերս վերադարձած էր Վիեննամէն: Նախագահ Առն յաջողութիւն մաղթեց Լիբանանի գեղեցկութեան թագուհիին՝ մօտերս Փորթօ Ռիբոյի մէջ տեղի ունենալիք գեղեցկութեան մրցանքին իր մասնակցութեան առիթով: Գեղեցկութեան թագուհի Յարպին կ'ընկերանային անոր հայրն ու զբօսաշրջութեան նախարար Լոր Խազեն:

ՍԱՖԱԻՒ «ԻՐԱՆ . . .»

Շարունակուած Ա. Էջեն

Սաֆաի Նաե ըսած է, որ Եմէնի հուսիները, որոնք յառաջիկայացք արձանագրած են Պապ Մանտէպի ներուցին մէջ եւ կարելոր դիրքեր գրաւած են, ունին իրենց «սեփական նպատակներն ու ռազմավարութիւնը, եւ անոնք մեծ յառաջընթաց արձանագրած են գէլքի արտադրութեան մէջ»:

Իրանի նախագահ Մետուս Փեգեշքիան 23 սեպտեմբերին ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի ամպիոնէն վճռահեցուցած էր, որ Իրան երբեք պիտի չյանձնուի Միացեալ Նահանգներուն, բայց տակաւին կը հաւատայ դիւաւազիստութեան:

Ան Նաե հակադարձած էր Միացեալ Նահանգներու նախագահ Թրամփին՝ յայտարարելով, որ Իրան ոչ թէ ահաբեկչութեան աղբիւր է, այլ անոր զոհը: «Երեկ Թրամփ մեզ ահաբեկիչներ անուանեց: Մենք ահաբեկչութեան զոհեր ենք», յայտարարած էր Փեգեշքիան:

ՄԱԿ-Ի ԺՈՂՈՎԻՆ ԶՈՒԳԱՀԵՌ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԱԼԱՄ ԱՆՋԱՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՌԻՆԵՑԱԻ ՏԱՐՔԵՐ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ՀԵՏ

ՄԱԿ-ի ժողովին իր մասնակցութեան զուգահեռ վարչապետ Նաուաֆ Սալամ անջատ հանդիպումներ ունեցաւ տարբեր երկիրներու ղեկավարներուն հետ: Խօսակցութիւնները հիմնականին մէջ կեդրոնացան շրջանին եւ յատկապէս Լիբանանի մէջ անդորրութեան ու կայունութեան ամրապնդման քայլերուն եւ Լիբանանի հետ յարաբերութեանց աշխուժացման ճիգերուն վրայ: Նմանապէս, վարչապետը ընդգրծեց հարաւային գրաւեալ շրջաններու վերակառուցման եւ իւրաքանչեւ ուժերու հեռացման հրամայականն ու տեղահանուածներու ապահով տունդարձի անհրաժեշտութիւնը:

Արդարեւ, անցնող երկու օրերուն իր տեսակցութեանց անդրադառնալով՝ վարչապետ Սալամ «Էքս» հարթակի իր էջին մէջ նշած է իր տեսակցած ղեկավարներուն անուններն ու արժարժուած հարցերը:

Այս ծիրին մէջ Սալամ տեսակցած է Սուրիոյ նախագահ Ասիմ Շարիհ հետ՝ ներկայութեամբ Լիբանանի եւ Սուրիոյ արտաքին գործոց նախարարներ Եուսեֆ Ռաժժիի եւ Ասատ Շիպակիի: Զննարկուած են հիմնականին մէջ Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ միացեալ գերագոյն յանձնախումբի վերաշխուժացման, Լիբանանի մէջ խաղաղութեան, գերիշխանութեան ու կայունութեան ամրապնդման քայլերը, ինչպէս նաեւ՝ շրջանին մէջ հաղորդակցութեան, յատկապէս՝ ելեկտրականութեան, ուժանիւթի, փոխադրամիջոցներու եւ ենթակառոցի վերակենդանացման կարելիութիւնները:

Նիւ Եորքի մէջ 22-28 սեպտեմբերի միջեւ գումարուող ՄԱԿ-ի 81-րդ Ընդհանուր ժողովին զուգահեռ վարչապետ Սալամ Նաե հանդիպում ունեցած է Իրանի նախագահ Մետուս Փեգեշքեանի հետ՝ ներկայութեամբ ար-



տաքին գործոց նախարարներ Ապաս Արադչիի եւ Եուսեֆ Ռաժժիի: Այս առիթով Լիբանանի վարչապետը կայունութիւն եւ խաղաղութիւն մաղթած է Իրանին՝ նշելով, որ Լիբանանը գերծպեց է պահել շրջանային հակամարտութեանց հետեւանքներէն ու յարգել Լիբանանի անկախութիւնն ու գերիշխանութիւնը: Այս առիթով վարչապետ Սալամ Իրանի նախագահին առաջարկեց Լիբանանի մէջ Նոր դեպքան նշանակել եւ Նոր էջ բանալ Լիբանանի հետ:

Սալամ Նաե մասնակցած է շրջանային մակարդակի քաղաքական ու տնտեսական օրակարգերով հանդիպումներու, ինչպէս նաեւ անջատ հանդիպումներ ունեցած է շրջանային թէ միջազգային երկիրներու համապատասխան ներկայացուցիչներուն հետ, ինչպէս՝ Ծոցի երկիրներուն, Եգիպտոսի, Յորդանանի, Քուէյթի, Եմէնի, Սուրիոյ, Արաբական Միացեալ Եմիրութեանց, Սպանիոյ, Ռումանիոյ, Ռուսիոյ, Թուրքիոյ եւ ՄԱԿ-ի բարձրագոյն յանձնախումբերու, Եւրոպական Միութեան եւ այլ մարմիններու պատասխանատուներուն հետ:

Այս հանդիպումներուն ծիրին մէջ ուշազգրաւ էր Լիբանանի կայունութեան եւ վերանալեզնումին համար Եւրոպական Միութեան տրամադրած հինգ հարիւր հինգ (505) միլիոն եւրոյի ծրարի յատկացումը:

ՃԱՏԼԱԼԼԱ «Ի ՎԵՐՁՈՅ ԻՍՐԱՅԷԼ ՊԻՏԻ ՀԵՌԱՆԱՅ ՄԵՐ ՀՈՂԵՐԷՆ»

«Ի վերջոյ թշնամի իւրայելեան ուժերը պիտի հեռանան մեր հողերէն՝ շնորհիւ մեր բնակչութեան գոյատեւման եւ դիմադրելու կամքին, զուգահեռաբար Իրանի իսլամական հանրապետութեան սահմանագծած շրջանային եզրաքանութեան», յայտարարեց Հաւատարմութիւն դիմադրութեան պլոքի անդամ երեսփոխան Հասան Ֆատալլա երեկ Դիմադրութեան նահատակներու երկամեայ տարեկիցին առիթով կազմակերպուած յարգանքի յուշ երեկոյին, Սեն Թերեզի իմամ Մուսթաֆայի անուան համալիրին մէջ:

Ֆատալլա շեշտեց, որ աւերուած շրջանները պիտի վերակառուցուին, տեղահանուածները պիտի վերադառնան: «Երբ Լիբանանի մէջ կառավարութիւն ըլլայ, ան է իր քաղաքացիներու պատասխանատուութիւն, ինչ ալ ըլլան պատերազմի պատճառները, անկախ թէ դե՛մ ենք անոր, թե՛ համաձայն», ընդգծեց երեսփոխան Ֆատալլա՝ նշելով, որ կառավարութեան հիմնական պատասխանատուութիւններէն է իր տրամադրութեան տակ գտնուող նիւթական կարելիութիւններէն մաս մը



տրամադրել վերակառուցման ու տեղահանուածներու հոգածութեան:

Ֆատալլա առաջնահերթ նկատեց տեղահանուածներու հոգածութեան հարցը՝ շեշտելով, որ անկալ Յըզալլայի հիմնական մտահոգութիւններէն մէկն է: Ան Նաե դիտել տուաւ, որ Իրան կրնար բանակցիլ եւ համաձայնիլ ամերիկացիներուն հետ, սակայն ան առկախած է այս հարցը, որովհետեւ առաջնահերթ կը նկատէ Լիբանանի գծով համաձայնութեան հաստատումը:

ՊԸԶՐԻ «ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ԿԻՐԱՐԿԷ ՀՐԿԻԶՈՒԱԾ ՀՈՂԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ»

«Իսրայել կը կիրարկէ հրկիզուած հողի քաղաքականութիւն», յայտարարեց երեսփոխան Ապտել Ռահման Պըզրի երեկ՝ անդրադառնալով Լիբանանի գծով Իսրայելի որդեգրած քաղաքականութեան: Պըզրի նշեց, որ Իսրայել կը գտնուի նախընտրական փուլի մէջ եւ կ'ուզէ Լիբանանի հետ իր հարցը օգտագործել իբրեւ ընտրական խաղաքարտ՝ դիտել տալով, որ պէտք է սպասել մինչեւ այդ ընտրութեան արդիւնքներն ու կացութեան յստակացումը: Պըզրի յիշեցուց, թէ Իսրայել կը ինքնուրուագի իր տիրապետած լիբանանեան հողատարածքները՝ փորձելով կանխարգելի հարաւցիներու տունդարձը: «Շրջանին մէջ լուծման նախանշաններուն վրէժ է սպասել հազիւ շրջանային ամերիկեփրանեան պատերազմի ու ամերիկեան կիսամեայ ընտրութեանց արդիւնքներէն ետք», դիտել տուաւ Պըզրի: Պըզրի անհրա-



ժեշտ նկատեց Լիբանանի գործօն մասնակցութիւնը միջազգային քուիսային հանդիպումներուն, «որովհետեւ Լիբանան իրաւունքով է, եւ անոր աշխուժ մասնակցութիւնը առաւել եւս կը հիմնաւորէ իր դատին արդարացի ըլլալը միջազգային հայթակներու վրայ», ընդգծեց Պըզրի:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ «ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ»-Ի ՎԵՐԱՄՈՒՏ (2026-2027)

ՆՍՕՏՏ Արամ Ա. վեհափառ հայրապետի օրհնութեամբ եւ բարձր հովանաւորութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Արամ Ա. կաթողիկոս հայագիտական հիմնարկ»-ը 2026-2027 տարեշրջանին պիտի բոլորէ իր 14-րդ կրթական տարին՝ շարունակելով հայագիտական նիւթեր Նոր սերունդներուն փոխանցելու իր առաքելութիւնը:

Հիմնարկը իր դռները կը բանալ բոլոր անոնց առջեւ, որոնք կը ձգտին խորացնել իրենց իմացութիւնը հայագիտութեան տարբեր բնագաւառներուն մէջ, անելի մօտէն հաղորդ դառնալ մեր ազգային ու հոգեւոր ժառանգութեան եւ ձեռք բերած գիտելիքը ի սպաս դնել հայ կեանքին:

ԴԱՍԱՆԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

- Դասաւանդութիւնները տեղի պիտի ունենան շաբաթը երեք օր՝ երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, երեկոյեան ժամը 5:00-7:30, «Խորէն Ա.» կեդրոնին մէջ, Փանար:
- Լիբանանէն դուրս բնակող ուսանողներուն պիտի ընծայուի դասընթացներուն առցանց հետեւելու կարելիութիւն, որպէսզի աշխարհագրական հեռաւորութիւնը արգելք չհանդիսանայ հայագիտական ուսման:
- Ուսումը՝ անվճար:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Նոր ուսանողները արձանագրութեան համար կը ներկայանան կաթողիկոսարան՝ տնօրէնութեան, առաւօտեան ժամը 9:00-1:00, բացի՝ շաբաթ եւ կիրակի օրերէն:

ՎԵՐԱՄՈՒՏ

Դասաւանդութիւնները կը սկսին երկուշաբթի, 12 հոկտեմբեր 2026-ին, երեկոյեան ժամը 5:00-ին:

ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՊԱՐՏԻՆ ԻՐԵՆՑ ՅԵՏ ՈՒՆԵԱԼ՝

- 1 լուսանկար
- Անձնաթուղթի պատճեն
- Բ. Պաշտօնէի կամ անոր համապատասխանող վկայականի պատճեն

ՅԱԽԵՆԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Կաթողիկոսարան՝ +961 (0) 4 410 001
Տնօրէնութիւն՝ +961 (0) 3 713 897
Ե-նամակ՝ edu@armenianorthodoxchurch.org

Հայագիտական ուսումը՝ ազգային ինքնութեան պահպանման, հայ մշակոյթի ճանաչման եւ Նոր սերունդներու հայեցի դաստիարակութեան կարեւորագոյն ուղիներէն մէկն է:

«ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ»-Ի ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԴՊՐԵՎԱՆՔԻ ՆՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքի 2026-2027 ուսումնակրթական տարեշրջանի Նոր աշակերտներու արձանագրութիւնները սկսած են:

Դպրեվանք կ'ընդունուին նախակրթարանի 6-րդ դասարանը աւարտած աշակերտներէն սկսեալ մինչեւ վերի կարգերու աշակերտներ:

Դպրեվանք յաճախել փափաքողները տեսչութեան հետ կրնան կապ հաստատել հեռաձայնելով հետեւեալ թիւերուն՝ +961 71 752259 կամ +961 71 912832:

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՏ

ՀՅԴ «Ս. ԹԵՀԼԻՐԵԱՆ» ԱԿՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԾԱՇԿԵՐՈՅԹ ՊԱՐԱՇԱՆԴԷՍ

ԳՐԱՌՈՒՄԵ ՕՐ

13
ՓԵՏՐՈՒՄ
2027

@SOGHOMONTEHLIRIANGOMIDE
SOGHOMON TEHLIRIAN GOMIDE

ԼԻՒՍԻ ԹԻՒԹԻՒՆՃԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ «ԼԻԱԼՈՒՍԻՆ» ՀԱՏՈՐԻ ԵՆՈՐՀԱՀԱՆԴԵՍ

Հինգշաբթի, 17 սեպտեմբեր 2026-ին Համագայինի «Լիւսի Թիւթիւնճեան» ցուցասրահին մէջ տեղի ունեցաւ նոյն ցուցասրահի բարերար Լիւսի Թիւթիւնճեանին նուիրած «Լիալուսին» հատորին շնորհահանդէսը եւ այս առիթով կազմակերպուած անոր գործերու ցուցահանդէսը:

Ձեռնարկի հանդիսավար Իզապէլ Տիարայի բարի գալուստ մաղթեց բոլորին եւ յայտնեց, որ «Լիալուսին» հատորը հրատարակուած է «Լիւսի Թիւթիւնճեան ֆոնտ»-ին կողմէ:

Թիւթիւնճեան ընտանիքի խօսքը արտասանեց Զարլա Թիւթիւնճեան, որ սրտանց շնորհակալուիլ յայտնեց բոլորին իրենց ներկայութեան համար՝ հաստատելով, որ իրենց ներկայութիւնը կը վկայէ, որ Լիւսի Թիւթիւնճեանին յիշատակը անոնց սրտերուն եւ հոգիներուն մէջ վառ կը մնան:



Ան ըսաւ, որ գիրքի շնորհահանդէս կատարելը, զգացական վայրկեան մը ըլլալով հանդերձ, նոյն տան Լիւսի Թիւթիւնճեանի կեանքին եւ սիրոյ հետ ապրելու գեղեցիկ պահ մըն է մեզի համար:

Զարլա Թիւթիւնճեան շնորհակալութիւն յայտնեց ցուցասրահի տնօրէն Յակոբ Հաւթեանին, որ յղա-



լին, հաստատելով, որ սոյն սրահը սովորական ցուցասրահ մը չդարձաւ, այլ վերածուեցաւ մշակոյթի գործիչներու ու մշակութասէր հանրութիւնը համախմբող միջավայրի մը, որուն երթը պիտի շարունակուի՝ շնորհիւ իրենց զաւակներուն ու նաեւ իրենց գործին հաւատացող ազնիւ անհատներու զօրակցութեան: (Յակոբ Հաւթեանի խօսքը ամբողջութեամբ կու տանք առանձին):



Արուեստաբան դոկտ. Մովսէս Հերկէեան խօսք անելով՝ հաստատեց, որ սոյն շնորհահանդէսը վկայութիւնն է Լիւսի Թիւթիւնճեանի ազնուութեան, մարդասիրութեան եւ անկեղծութեան, անեցնելով, որ իբրեւ արուեստագետ՝ ան գնահատուած է ոչ միայն իր եւ ներկաներուն կողմէ, ոչ միայն հայ գաղութին կող-



ցած էր այս գիրքի պատրաստութեան գաղափարը՝ նշելով, թէ գիրքը յիշատակի ու յարգանքի մեր արտայայտութիւնն է, որուն իրականացման օրին արգելք հանդիսացաւ «Քորոնա» ժաիրը: Ան շեշտեց, որ սոյն գիրքը դամբանական չէ, այլ՝ սիրոյ եւ յարգանքի գեղեցիկ արտայայտութիւն մը:

Եզրափակելով իր խօսքը՝ Թիւթիւնճեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք մասնակցեցան սոյն ծրագիրին՝ գրութիւններով, նկարներու փոխանցումով եւ վկայութիւններով:

«Լիւսի Թիւթիւնճեան» ցուցասրահի տնօրէն Յակոբ Հաւթեան իր խօսքին մէջ անդրադարձ կատարեց Լիւսի Թիւթիւնճեանի անձին, անոր դրական եւ գործուն ներկայութեան, համախմբող, ազնիւ, բարի, հոգատար, անկեղծ նկարագրային գիծերուն, որոնցմէ փոխանցուած պատգամով պէտք է առաջնորդուիլ: Ան յայտնեց, թէ Լիւսի Թիւթիւնճեանին նուիրած «Լիալուսին» հատորը, որ հարուստ է անոր մասին վկայութիւններով, երկար տարիներու հրատարակչական իր ապարեզին մէջ ունեցաւ կենսական նշանակութիւն, անեցնելով, որ հատորին խմբագրութիւնը եւ պատրաստութիւնը բնագործէ հան-



գիստ եւ ուրախ մթնոլորտի մէջ ընթացաւ: «Հոն տեղ գտած բոլոր յօդուածներուն, վկայութիւններուն, արժեւորումներուն եւ կարծիքներուն մէջ կայ հասարակ յայտարար գիծ մը, որ կը բնորոշուի՝ ամբողջական անկեղծութեամբ, երախտագիտութեամբ, համամարդկային եւ ազգային վեհ գաղափարներու շեշտադրումով», դիտել տուաւ ան: Այս առիթով, Հաւթեան շնորհակալութիւն յայտնեց Թիւթիւնճեան ընտանիքի անդամներուն, որոնք գործնապէս սատարեցին սոյն հատորի պատրաստութեան:

Եզրափակելով իր խօսքը՝ Հաւթեան դիտել տըլաւ, որ Համագայինի մեծ ընտանիքը երախտապարտ կը մնայ Կարպիս եւ Լիւսի Թիւթիւնճեան ամո-

ԼԻՈՎԻՆ ՈՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԵԱՆՔ ՄԸ ԱՊՐԱԾ ԱՆՀԱՏԻ ՄԸ ՀԱՄԵՍՏ, ԲԱՅՑ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՀԱՐՈՒՍՏ ՎԿԱՅԱՐԱՆՆ Է ԱՅՍ ՀԱՏՈՐԸ*

Դարձեալ՝ հաւաքուած ենք Համագայինի «Լիւսի Թիւթիւնճեան» ցուցասրահին մէջ եւ դարձեալ մեծագոյն ներկան այստեղ տիկին Լիւսին է:

Ահաւասիկ հինգ տարիներ արդէն անցած են այն չարաքաստիկ օրէն, երբ Լիւսի Թիւթիւնճեան, ամայացած Պէյրութ մայրաքաղաքի եւ Պուրճ Համուսի պողոտաներէն անցնելով, վերջին անգամ ըլլալով հանդիպեցաւ նաեւ Համագայինի ցուցասրահ եւ վատահաբար իր քաղցր ժպիտով մնաս բարով ըսաւ իր երկրորդ հարազատ օճախին՝ այս ցուցասրահին:

«Քորոնա» ժաիրի ամէնէն սարսափազդու օրերուն ան փակեց իր յոգնած աչքերը, հաւանաբար նաեւ՝ այն ցաւով, որ անոր փափուկ հոգին ու սիրտը չդիմացան մարդկային մեծ թիւով կեանքեր հնձող ժաիրին պատճառած ողբերգութեան:

Այսօր պատմութեան վերածուած են այս բոլորը, սակայն օրին մղձաւանջ էր բոլորիս համար՝ ամէն վայրկեան կեանքեր խլող մահասփիւռ այդ իրավիճակը: Բոլորս գիտակցեցանք, թէ որքան թանկ է կեանքը եւ միաժամանակ՝ որքան՝ խախուտ եւ խաբուսիկ: Բոլորս զգացինք անոր արժեքը եւ մեր ապրած սովորական կեանքի մտահոգութիւններու ու տագնապներու անհեթեթութիւնը, քիսախնդրութեանց ու այլամերժութեանց անմիաստ էութիւնը: Բոլորս քիչ մը անելիով ըմբռնեցինք, որ անցաւոր ու ժամանակաւոր այս կեանքը կարելի է իմաստաւորել դրական լիցքով եւ բարի գործով:

Հինգ տարիներ առաջ կեանքը, եւ անելին, մարդը սիրող տիկին Լիւսին, որուն համար հիմնական հարստութեան եւ ուրախութեան աղբիւրը մարդոցմով համախմբուած ըլլալու խորիմաստ ըմբռնումն էր, բաժնուեցաւ մեզմէ՝ լուռ, իր ամօթխած ժպիտով, անծայն, առանձին ու առանց բողոքի: Վերջին օրերուն առանձին պայքարեցաւ նաեւ հիւանդութեան դէմ, որովհետեւ օրուան պայմանները այդ մէկը կը պարտադրէին, եւ իր յուղարկաւորութիւնը նաեւ եղաւ այն միակ պահը, որ իր նկարագրին անյարիր՝ զինք շրջապատողները հազիւ տանեակ մը հարազատներ եւ բարեկամներ դարձան:

Այսօր, ահաւասիկ հինգ տարիներ ետք, ան դարձեալ շրջապատուած է մեծ թիւով հարազատներով, սիրելիներով եւ բարեկամներով, ու վստահաբար անոր համակող ժպիտը եւ այդ ժպիտին ետին գտնուող ու աչքերուն մէջ մարդկային վեհ զգացումներու, կարեկցանքի ու գուրգուրանքի թաքնուած արցունքի կաթիլները կը շարժեն մեր բոլորին Եւթիւնը, կը վերափառատարեն անկէ ժառանգած յիշատակները ու կը կենսաւորեն անոր ապրած կեանքը: Կեանք մը, զոր ամբողջականօրէն ապրեցաւ, «A life fully lived», ինչպէս պիտի ըսէր իր անդրանիկ զաւակը՝ Սիլվան, եւ այդ տողերը դրոշմուէին իր մօր նուիրուած հատորի կողքին վրայ: Այս պատճառով է, որ Լիւսին ու լիալուսինը միացան եւ հարազատները առաջարկեցին, որ գիրքին խորագիրը դառնայ «Լիալուսին»:

Առանց չափազանցութեան՝ կարելի է անվարան հաստատել, որ տիկին Լիւսին եւ անոր կողքին կանգնած հսկայ կաղնին՝ պարոն Կարպիսը, անելի քան կէս դար մարդկային վեհ ու բարձր արժեքներու ուսուցման դպրոց մը հանդիսացան լիբանանահայ ու նաեւ սփիւռքահայ կեանքին մէջ: Այսօր այս գերագոյն արժեքն է, որ անոնց բացակայութիւնը կը դարձնէ ամէն վայրկեան զգալի՝ տրուած ըլլալով, որ արժեքային այդ համակարգը կը դիմագրաւէ մեծ մարտահրաւերներ, եւ մենք բոլորս միշտ ալ այդ դպրոցին վերադառնալու եւ անոր նուիրական ըմբռնումներով առաջնորդուելու հրամայական անհրաժեշտութեան դիմաց կը գտնուինք ամէն օր:

Հաւաքուած ենք այսօր կատարելու շնորհահանդէսը գիրքի մը, որ իրամբ իրադատու է: Կրնամ անվարան հաստատել, որ Լիւսի Թիւթիւնճեանին նուիրուած «Լիալուսին» հատորը երկար տարիներու հրատարակչական ապարեզիս մէջ իր կենսական նշանակութիւնը ունեցաւ: Հատորին խմբագրութիւնը եւ պատրաստութիւնը բնագործէ հանգիստ եւ ուրախ մթնոլորտի մէջ ընթացաւ: Հոն տեղ գտած բոլոր յօդուածներուն, վկայութիւններուն, արժեւորումներուն եւ կարծիքներուն մէջ կայ հասարակ յայտարար գիծ մը, որ կը բնորոշուի՝ ամբողջական անկեղծութեամբ, երախտագիտութեամբ, համամարդկային եւ ազգային վեհ գաղափարներու շեշտադրումով: Յաւուր պատշաճի խօսքեր չեն, այլ բոլորը անխտիր հա-



րազատ սրտէ բխող իրական զգացումներ ու տիկին Լիւսիի ջերմութիւնը ապրած անհատներու վաւերական վկայութիւններ են: Այլապէս ալ, գիրքին իւրայատկութիւնը նաեւ կը կայանայ այն հանգամանքին մէջ, որ տիկին Լիւսիի համախմբող նկարագրին յարիր՝ հոն տեղ գտած են հոգեւոր, քաղաքական, դիւանագիտական, ազգային-հասարակական, փուլեթանական, մամուլի եւ մշակոյթի գործիչներու, ինչպէս նաեւ բարեկամներու ստորագրութիւնները: Այսպիսի բազմազանութեամբ, բովանդակութեամբ եւ ստորագրութիւններով հարուստ հրատարակութիւն մը հազաւգիւտ է մեր կեանքին մէջ:

Լիւսիին ու ամբողջական կեանք մը ապրած անհատի մը համեստ, բայց միաժամանակ հարուստ վկայարանն է այս հատորը, որուն յենասինը անշուշտ պարոն Կարպիսն է: Գլխագիր մարդ մը՝ կեանքի իւրայատկ փիլիսոփայութեամբ, ինքնագրագցումով ու ինքնաշխատութեամբ բարձունքներ նուաճած, միջազգային ու ազգային հիմնախնդիրներու ու անցուդարձներու մօտէ հետեւող արթուն քննադատ մը, ազնուական եւ, վերջապէս, ուժեղ անհատականութեամբ օժտուած օրինակելի տիպար մը:

Այդ, պարոն Կարպիսին համար նիւթականը դարձաւ միջոց եւ ոչ թէ՝ նպատակ, եւ այդ նիւթականը ոչ մէկ աստէն զայն հեռու պահեց պարզ ու սովորական մարդու կեանքէն, ու ան դարձաւ բարեկամ՝ մեծին թէ փոքրին, հարուստին ու աղքատին: Իր տան հիւրերը դարձան բոլորը, եւ ինք միշտ իր աթոռը գետեղեց ամէնէն համեստ անհատին կողքին:

Այս առիթով շնորհակալութեան խօսք ունիմ Կարպիս եւ Լիւսի Թիւթիւնճեան ընտանիքի անդամներուն՝ Սիլվային, Ռուպինային, Անյին եւ Զարլային, որոնք գործնապէս սատարեցին այս հատորի պատրաստութեան, եւ վստահ եմ, որ իրենց համար ալ այս աշխատանքը հոգեկան լիցք հաղորդող ու գոհացումի տեղին առիթ մը հանդիսացաւ: Շնորհակալութիւն՝ ձեր բոլորին, որ ձեր ներկայութեամբ վառ կը պահեք տիկին Լիւսիի եւ պարոն Կարպիսի յիշատակը:

Վերջապէս, Համագայինի մեծ ընտանիքը երախտապարտ է կարմիր տանի եւ տիկին Կարպիս եւ Լիւսի Թիւթիւնճեաններուն: Այս սրահը սովորական ցուցասրահ մը չդարձաւ, այլ վերածուեցաւ մշակոյթի գործիչներու ու մշակութասէր հանրութիւնը համախմբող միջավայրի մը: Անցնող տասնէօթ տարիներուն անելի քան 175 արուեստագետներու գործեր գաղափարեցին այս ցուցասրահին պատերը: Մեծ թիւով հրատարակութիւններու շնորհահանդէսները կենսաւորեցին անոր առաքելութիւնը: Երիտասարդական եւ աշակերտական ցուցահանդէսներ քաջալեր հանդիսացան նոր տաղանդներու յայտնաբերման, եւ այս բոլոր նախաձեռնութիւններուն գլխաւոր եւ մնայուն ներկան դարձան տեր եւ տիկին Կարպիս եւ Լիւսի Թիւթիւնճեանները: Անոնք նոյնիսկ անհանգստութեան պատճառով բանաւոր բացակայութիւն չարձանագրեցին:

Երթը պիտի շարունակուի՝ շնորհիւ իրենց զաւակներուն ու նաեւ իրենց գործին հաւատացող ազնիւ անհատներու զօրակցութեան, որպէսզի մշակոյթի ու գրականութեան այս կեդրոնը ապրի միշտ իր լիալուսինը, անոր քաղցր մնայ անմար, եւ այդ մէկը՝ ի խնդիր մեր հաւաքական կեանքի աշխուժացման ու նպատակներու կենսագործման:

Չենք մոռնար բարի, ազնիւ, հոգատար, անկեղծ եւ ամօթխած ժպիտող, տիկին՝ Լիւսին:

Վստահ եմ, որ վերէն դարձեալ իւրաքանչիւր անգամ, երբ անուղ արտասանենք, նոյն ամօթխածութիւնը պիտի պարունդէ դէմք ու հոգին: Բայց մենք քեզ մեծարելով՝ ամէն օր քիչ մը անելի պիտի մարդանանք ու քալենք քու բացած լուսնորի ճանապարհը:

Իր խոսարհիւք ամէն ու անմոռաց վաստակիդ դիմաց:

ՅԱԿՈԲ ՀԱՎԹԵԱՆ

* Խօսք՝ արտասանուած Լիւսի Թիւթիւնճեանի նուիրուած «Լիալուսին» հատորի շնորհահանդէսին:

ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԴԱԴՐԵՑՆԵԼ, ՓՐԿԵԼ ԳԵՏԵՐԸ

Մինչև ե՛րբ մարդիկ պիտի պատերազմին եւ անտեսեն սպառնացող ծանր վտանգներ, որոնց շարքին՝ աշխարհի գետերու չորացման հոլովոյթը: Մինչև ե՛րբ զենք արտադրող փոքրամասնութիւն մը պիտի շարունակէ քանդել մեծամասնութեան մը կեանքը եւ երկիրը: Գետերը սկսած են չորնալ: Այս մասին ահազանգ կը հնչեցնէ «Տը Կարտիըն» թերթը:

Ն.

ԱՇԽԱՐՀԻ ԳԵՏԵՐԸ ԿԸ ԳՏՆՈՒՆ ՓԼՈՒԶՄԱՆ ԵԶՐԻՆ: ԿՐՆԱՂԵ ՓՐԿԵԼ ԶԱՆՈՆԵ, ԲԱՆԻ ՈՒՇ ԶԷ



Տանուպ գետի սովորաբար ջրասոյգ տարածքները մերկ կը դառնան Ռումանիոյ Ռասովա քաղաքին մէջ՝ ջուրի չափազանց ցած մակարդակին պատճառով

Աշխարհի ամենէն մեծ գետերու մակդիրները՝ «մեծ գետ», «բոլոր գետերը կլլող գետ», «մայր Գանգես» եւ «հին հայր Թէյմզ», կը պատկերացնեն այն մասին, թէ մենք ի՞նչ կը զգանք անոնց նկատմամբ: Անոնք կը կերակրեն եւ ջուր կու տան մեզի եւ բազմատեսակ անասուններու: Անոնք կը կրեն մեր առեւ-

տուրը, բայց նաեւ զովացուցիչ ըմպելիք են տաք օրերուն:

Անոնք ջիղեր հանդարտեցնողներ են, մխիթարութեան, հիացմունքի եւ յարգանքի աղբիւրներ:

Բայց եւ այնպէս, աշխարհի բազմաթիւ գետեր կը տառապին՝ հանդիպելով բնապահպանական զանազան մարտահրաւերներու: Համաշխարհային օդերեւութաբանական կազմակերպութեան հրապարակած նոր զեկոյցը ցոյց կու տայ, որ 2025 թուականին աշխարհի գետերը ապրած են վերջին երեք տասնամեակներու ամենէն չոր տարիներէն մէկը:

Մենք տարիներ շարունակ կեդրոնացած ենք ջրային խըն-դիրներու վրայ:



Արժանթին, Պուէնոս Այրես նահանգ, Ռեկոնկիստա գետի հոսանքներէն մէկը

«Մեր գետերը» նոր նախագիծը ընթացք առաւ անցեալ շաբաթ: Յառաջիկայ տարի աւելի մանրամասն կ'ուսումնասիրուի աշխարհի գետերու լաւ եւ վատ վիճակը:

Մեր գետերուն կապուած՝ կ'ուզենք աւելի խոր ուսումնասիրել կլիմայի փոփոխութեան հետեւանքները: Երաշտը արդէն իսկ կը հարուածէ գետային համակարգերը, ինչպէս Ամազոնը եւ Լա Պլատան՝ Լատինական Ամերիկայի մէջ, բայց կան նաեւ մարտահրաւերներ՝ կապուած մեր սառցադաշտերու հալելուն նոր ժամանակացոյցի եւ անձրեւներու փոփոխութեան: Հնդկաստանի Գանգեսը եւ Պրահմապուտրան տուժած են տարեկան անձրեւներու եղանակի փոփոխութիւններէն:

Նոյնիսկ Ափրիկէի հօգոր Քոնկո գետը՝ աշխարհի ամենէն խորունկ գետը (այն երկու անգամ կը հատէ հասարակածը), տուժած է կլիմայական ճգնաժամէն՝ վերջին քանի մը տասնա-

մեակներու ընթացքին դանդաղ չորնալով անձրեւներու սակաւութեան, Ատլանտեան ովկիանոսի կեդրոնական-արեւելեան արեւադարձային հատուածին մէջ ծովու մակերեսային ջերմաստիճանի բարձրացման պատճառով: Սակայն մենք կ'ուզենք նաեւ ուսումնասիրել մարդկային այլ ազդեցութիւններ:

Մեր գետերուն մեծ մասը չափազանց շատ կ'օգտագործուի՝ սկսած իրենց ակունքներէն մինչեւ ծով թափիլը:

Քաղաքական պայքարներ կ'ընթանան այն մասին, թէ ինչպէ՛ս պէտք է բաշխուի այդ ջուրը՝ թէ՛ դրացի պետութիւններու միջեւ (Քուրաասո), թէ՛ կարգ մը պարագաներու՝ այնպիսի երկիրներու միջեւ, ինչպէս են Եգիպտոսն ու Եթովպիան, որոնք վերջերս լուծած են Նեղոսի բաժանման շուրջը տարակարծութիւնը, դիւանագիտական երկարատեւ ջանքերէ ետք:

Կարգ մը պարագաներու, ինչպէս է Միսիսիփի գետի համակարգը, չափազանց շատ նախագիծներու համար կ'օգտագործուի, իսկ իշխանութիւնները երկմտանքի մէջ են՝ գտնելու իրենց ստեղծած խնդիրները լուծելու ուղիներ: Գետաբերանը փորուած է մուտքը բարելաւելու համար, բայց բնակիչները այժմ կը պայքարին ովկիանոսի ներխուժման դէմ:

Ձեռք գազաթնակէտ

Մենք մեր գետերը դրած ենք խիստ վերահսկողութեան տակ, բայց հիմա, շատ մը վայրերու մէջ, տեղական իշխանութիւնները կը ձգտին զանոց կրկին ազատել:

Չիլաստան հսկայական գումարներ ներդրած է Եանկցե գետը վերականգնելու համար եւ կը տեսնէ արդիւնքները: Ձուներու կենսազանգուածի կրկնապատկումը եւ վտանգուած տեսակներու վերականգնումը ցոյց կու տան, որ կառավարութեան միջոցառումները կը սկսին գործել՝ ըստ կենսաբաններու:

Աղտոտման եւ կոյուղիի խնդիրը ծանօթ է, բայց հակառակ անոր՝ այդ նուազ զայրացնող չի դառնար:

Տարիներու ընթացքին հաղորդուած է Բրիտանիոյ գետեր թափուող մեծաքանակ կոյուղիի մասին եւ կարգ մը վայրերու մէջ քաղաքապետարանները հիմա կը միջամտեն՝ փորձելով վերականգնել հսկողութիւնը: Սակայն Բրիտանիա միակ երկիրը չէ, որ թունաւորած է իր գետերը:

Պուէնոս Այրեսի Ռեկոնկիստա գետը Արժանթինի երկրորդ ամենէն աղտոտուած գետն է (Ռիաչուէլոյէն ետք): Գիտականները վերջերս ստեղծած են լուծում մը եւ գետի շրջակայքը զտնուող քաղաքապետարանները այս ուղղութեամբ քայլեր կը ձեռնարկեն:

Յաջորդ տարուան ընթացքին մենք այս նախագիծի շրջանակներու մէջ կ'ուսումնասիրենք այս պատմութիւնները եւ կ'անդրադառնանք մեր գետերու նկատմամբ մեր սեփականութեան զգացողութեան, այն սիրոյն եւ կիրքին, որ մարդիկ կը զգան անոնց նկատմամբ:

2025 ԹՈՒԱԿԱՆԸ ԱՇԽԱՐՀԻ ԳԵՏԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՄԵՆԵՆ ԶՈՐ ՏԱՐԻՆԵՐՈՒ ՇԱՐՔԻՆ ԷՐ, ՅՈՅՑ ԿՈՒ ՏԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Աշխարհի գետերը 2025 թուականին ապրած են վերջին երեք տասնամեակներէն ամենէն չոր տարիներէն մէկը, ցոյց տուած է համաշխարհային ջրային պաշարներու համապարփակ ուսումնասիրութիւնը:

Համաշխարհային օդերեւութաբանական կազմակերպութեան (ՅՕԿ) կողմէ համաշխարհային ջուրի ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ աշխարհի ջրային խնայողութիւններու պահեստներու նուազում:

Գետնի վրայ կամ անոր տակ պահուող քաղցրահամ ջուրերու քանակը, ներառեալ՝ ստորգետնեայ ջուրերը, լիճերը, գետերը, ձիւնը, հողի եւ բոյսերու ու ծառերու ներսը սառնոյց խոնարհութիւնը, անցեալ տարի ամբողջ աշխարհի մէջ բնականէն 42 առ հարիւրով ցած էր:

Կլիմայական ճգնաժամի ազդեցութիւնը ծայրայեղ եղանակային պայմաններու վրայ եւ, այսպէս կոչուած, եղանակային փոփոխութիւններու յառաջացումը կը յանգեցնեն աւելի անկանխատեսելի աղէտի:

Սառցադաշտերու հալելէն մինչեւ ծայրայեղ երաշտներ եւ յանկարծակի ջրհեղեղներ, աշխարհի գետերը կը տատանին չափազանց շատ եւ չափազանց քիչ ջուրի միջեւ:

Վերջին եօթը տարիներու ընթացքին աշխարհի մէջ գետերու «բնականոն» հոսքը նուազած է 1991 թուականէն ի վեր:

«2025 թուականին, որ պատմութեան մէջ ամենէն տաք տարիներէն մէկն էր, գետերու միայն մօտ մէկ երրորդը կը գտնուէր բնական սահմաններու մէջ, մինչ համաշխարհային գետաւազանի տարածքի 36 առ հարիւրի գետային հոսքը բնականէն ցած կամ զգալիօրէն ցած էր, իսկ 21 առ հարիւրով՝ բնականէն բարձր եւ զգալի բարձր», կը նշուի Համաշխարհային ովկիանոսի մետաքսի կազմակերպութեան (ՅՄՕ) ուսումնասիրութեան մէջ, որ կատարուած է 13 համաշխարհային ջրատարրալուծման նորաձեւ միջոցներով եւ դիտարկուած՝ եղանակային տուեալներով պայմանաւորուած:

Մասնագետ Սելեստ Ծոլոն ըսած է. «Մենք կը սպառենք այդ խնայողութիւնները: Համաշխարհային ցամաքային ջրա-

յին պաշարները 2014-2016 թուականներէն ի վեր նուազելու միտում ցուցաբերած են՝ տասնամեակներ շարունակուող կայուն ազդանշան»:

Անցեալ տարի, չորրորդ տարին անընդմէջ, աշխարհի 19 մեծ սառցադաշտային շրջաններէն իւրաքանչիւրը կորսնցուց սառնոյց գանգուածը:

Սառցադաշտերը 1990-ական թուականներէն ի վեր ամենէն մեծ սառնոյց գանգուածի կորուստը արձանագրած են, եւ ամենէն մեծ կորուստները վերջինն են:

Միայն 2025 թուականին սառնոյց գանգուածի կորուստը կազմած է 400 միլիարտ թոն, որ 1,1 միլիմետրով կը բարձրացնէ համաշխարհային ծովու մակարդակը:

Վերլուծութիւնը ջուրի ամբողջ ծիրի համապարփակ, գիտականօրէն հիմնաւորուած նշում է, որ կը ներառէ՝ գետերու հոսքերը, ստորգետնեայ ջուրերը, գոլորշիացումը, ցամաքային ջուրերու կուտակումը, նաեւ՝ ձիւնն ու սառնոյցը: Համաշխարհային բնապահպանական կազմակերպութեան ջրաբուժութեան տնօրէն Ռեյն Ճենքինսըն նշած է, որ հետազոտութիւնը կոչ կ'ընէ գործել՝ նկատի առնելով ջրային միջոցներու շարունակական նուազումի համաշխարհային պատկերը:

«Մենք պէտք է կրկնապատկենք մեր ջանքերը՝ համաշխարհային ջրային միջոցներու վերաբերեալ մեր պատկերացումներ բարելաւելու համար, - ըսաւ ան: - Այդ կը պահանջէ տուեալներու հաւաքագրման եւ փոխանակման յաւելում: Այսպէս մենք կը բարձրացնենք մարդոց կեանքի եւ բարեկեցութեան պատկերացումները եւ պաշտպանութիւնը»:

Ուսումնասիրութիւնը կը հրապարակուի այն ժամանակ, երբ աշխարհի գետերը կը պայքարին կլիմայական ճգնաժամի պատճառով յառաջացած երաշտներու, աղտոտման եւ գերշահագործման հետեւանքով յառաջացած բազմաթիւ սպառնալիքներու դէմ:

Մեր գետային համակարգերու վրայ ազդեցութիւնը ուղղակի հետեւանքներ ունի մարդոց, անոնց բարեկեցութեան եւ համաշխարհային տնտեսութեան համար:

Այս ամրան Տանուպի ջուրի մրցանշային ցած մակարդակը անխախտ ընթացումի ճգնաժամ ստեղծեց Հոնկոնգի մէջ Բումանիոյ մէջ, չէ՞ որ անոնց բոլոր կորիզային շարժիչները, բացի մէկէն, ստիպուած էին փակուիլ, քանի որ գետը չափազանց ցած էր սառեցնելու համար անոնց ջուր մատակարարելու:

Միսիսիփի գետը, որ Միացեալ Նահանգներու 50 շրջաններու ջուրի հիմնական աղբիւրն է, կը սպառնայ քիմիական աղտոտութեամբ, որ մեքսիքական ծոցին մէջ ստեղծած է մեռեալ գոտիներ, ծովու մակարդակի բարձրացումով, որ կ'արագացնէ ճահիճներու կորուստը եւ աղի ջուրի թափանցումը, նաեւ՝ պարբերական երաշտներով: Ափրիկեան մեծ գետերը՝ Նեղոսը, Լիկերը եւ Չամպեզին, լուրջ սպառնալիքի տակ են ծանր աղտոտութեան վտանգին եւ կլիմայական պայմաններէն թխող երաշտներէն, որոնք կ'իջեցնեն ջուրի մակարդակը եւ կը վնասեն կենսոլորտին, բնութեան:

Անգլիոյ մէջ ոչ մէկ գետ ունի լաւ ընդհանուր բնապահպանական եւ քիմիական վիճակ: Անոնք կը տուժեն կոյուղիի եւ գիւղատնտեսական գործունեութեան պատճառով յառաջացած աղտոտութեան ազդեցութեան եւ ջուրի չափէն աւել-

լի արդիւնահանման թունաւոր համադրութեան:

Համաշխարհային ովկիանոսի մարիկեան կազմակերպութեան (ՅՄԿ) հետազոտութիւնը ցոյց կու տայ, որ գետերուն սպառնացող վտանգը կը շարունակուի, իսկ կարգ մը պարագաներու՝ կ'արագանայ:

2025 թուականին, թօթերորդ տարին անընդմէջ, «բնական» պայմաններ ունեցող գետաւազաններու թիւը յստակ փոքրամասնութիւն կը կազմէր՝ տատանելով 34-էն 38 առ հարիւրի սահմաններու մէջ, համեմատած՝ 1991-էն 2020 թուականներու ընթացքին բնական պայմաններու մէջ գտնուող միջին 46 առ հարիւրի հետ:

ՅՕԿ-ի վերլուծութեան հիմը տարիներու ընթացքին՝ 2021-2025 թուականներուն, Ամազոնի եւ Լա Պլատայի աւազաններու մեծ մասին մէջ, Հիւսիսային Ամերիկայի, Կեդրոնական եւ Արեւելեան Ափրիկէի մէջ, Կեդրոնական Ասիոյ եւ Միջին Արեւելքի գետերու հոսքերը բնական մակարդակէն ցած եղած են:



Քիմիական գործարան Միսիսիփի գետի վրայ

Գետերու հոսքը բնականէն ցած կամ շատ ցած էր, եւ այս ազդած է Հիւսիսային Ամերիկայի մեծ մասի, Հարավային Ամերիկայի Լա Պլատա եւ Սան Ֆրանսիսքոյի աւազաններու, արեւելեան Եւրոպայի աւազաններու, Միջին Արեւելքի եւ Կեդրոնական Ասիոյ վրայ:

Վերջին հիմը տարիներու ընթացքին ամբողջ աշխարհի մէջ ազգային օդերեւութաբանական եւ ջրատարրալուծման ծառայութիւնները յայտնած են մրցանշային ջրհեղեղներու եւ երաշտներու մասին: Կարգ մը վայրերու իրադարձութիւններու միջեւ ինկած ժամանակամիջոցին վերականգնման ժամանակ չէ եղած:

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 111-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ԱՅՆՃԱՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 87-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ



Հանդիսապետությամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահե արք. Փանոսեանի, կիրակի, 20 սեպտեմբեր 2026-ին Այնճարի Ս. Պողոս եկեղեցւոյ մէջ, Մուսա Լերան հերոսամարտի 111-ամեակին եւ Այնճարի հիմնադրութեան 87-ամեակին առիթով մատուցուեցաւ ս. պատարագ, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն Մուսա Լերան հերոսամարտի 18 նահատակներուն յիշատակին, եւ տեղի ունեցաւ մատա-րօրինքը:



Իր քարոզին մէջ սրբազան հայրը յայտնեց, որ հաջկերացց յիշատակն է 7-րդ դարուն տեղի ունեցած Քրիստոսի խաչափայտի ազատագրութեան: Ան պատմական ակնարկ մը նետեց 614 թուականին տեղի ունեցած դէպքե-րուն, թէ ինչպէ՛ս պարսկական բանակ-ները կը յաջողին պարտութեան մատ-նել բիւզանդացիները ու գրաւել Երու-սաղէմը եւ զայն կողոպտելէ ետք «որ-պէս աւար» իրենց հետ Տիգրան կը տանին Քրիստոսի խաչը: Պարսիկներուն եւ յոյնե-րուն միջեւ մղուած երկա-րամեայ պատերազմներէ ետք՝ 627-ին, Բիւզանդիոն կը յաջողի պարտութեան մատնել Պարսկաստանը եւ, Քրիստոսի խաչափայ-տը ազատագրելով, զայն կը վերադարձնէ Երուսա-ղէմ, եւ Զերակ կայսրը ան-ձամբ կը գլխաւորէ դէպի Երուսաղէմ հաջի վերա-դարձի յաղթական թափօ-րը: Խաչը կը տարուի Երու-սաղէմ եւ կը հաստատուի Ս. Յարութեան տաճարին մէջ:

Սրբազանը կարեւոր նկատեց պատմութիւնը գիտնալը, սակայն աւե-լի անհրաժեշտ սեպեց պատմութեան փոխանցած պատգամով մեր կեանքը նորոգելն ու պայծառացնելը: Ան շեշ-տեց, որ պէտք է անդրադառնանք, թէ խաչը հոգեւոր գորութիւն ու հաւատքի նշանով է բոլոր անոնց համար, որոնք դժուարութիւններու ու տագնապներու ընկնել անցնելով հանդերձ, չեն քանդու-իր, այլ խաչին պարգեւած գօրու-թեամբ կը մնան կանգուն ու յաղթական: Շահե արք. Փանոսեան բացատրեց, որ խաչ բարձրացնել կը նշանակէ Աս-տուծոյ միանալով չարին դէմ կռուիլ ու այդպիսով յաղթել, նաեւ կը նշանակէ Աստուծոյ կողմէ մեզի վստահուած պարտականութիւններուն նուիրուիլ, մարտնչիլ, զոհել ու զոհաբերել, որ-պէսզի մեր դասանած սրբութեան ար-ժեքներով պահպանուի մեր կեանքն ու ընկերութեան վիճակը:

Անդրադառնալով Մուսա Լերան հե-րոսամարտի 111-րդ տարեդարձին՝ սըր-բազանը շեշտեց, որ այս առիթը միշտ յիշատակած ենք զայն առնչելով հաչ-վերացի տօնին, որպէսզի մեր ժողո-վուրդը չմոռնայ, թէ խաչը դրօշ՝ ծուղ-է՛ նաեւ Մուսա Լերան լանջերուն իր հողն ու տունը պաշտպանող հայ կըտ-րիճին, որ իր ժողովուրդին մահը խա-փանելու համար ինքզինք ընծայած է վասն լինելութեան մղուող մեր ազգի դարաւոր պայքարին: Ան ըսաւ, որ

ամեն տարի հաջկերացի տօնախմբու-թեանց շրջագիծէն ներս ու մեր կրօնա-կան ու ազգային արտայայտութիւննե-րուն ընդմէջէն կը ձգտինք մեր յիշողու-թեան մէջ պայծառացնել անոնց յիշա-տակը, որպէսզի 87 տարիներէ ի վեր մեր ժողովուրդին նուիրումովն ու քըր-տինքովը շարձախուած Այնճարի այս հողին վրայ մեր կեանքը ըլլայ հայա-դրոշմ ու քրիստոնէական:

Շարունակելով իր խօսքը՝ առաջ-նորդ հայրը դիտել տուաւ, որ այսօր

մեր եկեղեցիներէն ներս նաեւ կը նշենք Հայաստանի Հանրապետութեան ան-կախութեան հռչակման 35-րդ տարե-դարձը եւ նուիրական այս առիթով բա-րեպաշտ մեր ժողովուրդին հետ միա-սին կը կատարենք Հանրապետական մաղթանք, որպէսզի զգանք, թէ հայրե-նիքը կը մնայ մեր ազգի յոյսերուն ու հեռանկարներուն յենարանը:

Առաջնորդը ըսաւ, որ նուիրական այս պահուն, մեր յիշողութեան մէջ



պէտք է արթննայ մեր ամբողջ անցեա-լը, որուն դիմաց պարբերաբար պէտք է ինքնաքննութիւն կատարենք, որպէս-զի մեր թերացումներուն ու անկումնե-րուն մէջ սթափինք, զգաստանանք ու հայ մնալու, միասին ըլլալու, հզօր պատմութիւն կերտելու առաջադրա-նքով նորոգուինք: Ըստ անոր՝ նախորդ բազում դարերուն ազգովին շատ բան կորսնցուցինք, բայց հաւատարիմ մնացինք մեր ներքին արժեքներուն եւ եղանք հայրենասէր ու հաւատքով գըր-կեցինք անմահութեան գաղափարը: Սրբազանը ըսաւ, որ պէտք է շարունա-կենք հաւատալ, թէ անմահ են անոնք, որոնք ոգեկան ուժով կը պայքարին մահուան դէմ, եւ պէտք է շարունակենք հաւատալ, թէ մեր ժողովուրդին դիմաց դարձեալ պիտի բացուին մեծագործու-թեան ժամանակներ: Ու պէտք է շարու-նակենք մեր ունեցած սիրած ըլլալու ու պաշտպանելու փաստը արտայայ-տել, որպէսզի ի սփիւռս աշխարհի տարտղնուած մեր ժողովուրդը յաղթա-կան ընթացքի մէջ պահէ իր կեանքը ու մրրիկներով շրջապատուած մեր հայ-րենիքին նաւը տանի մեր դարաւոր տենչերուն ու երագներուն, եզրափա-կեց առաջնորդ սրբազանը:

Այնուհետեւ կատարուեցաւ գոհա-բանական մաղթանք եւ Եռագոյն դրօ-շի օրինութիւն:

Պատարագի աւարտին եկեղեցւոյ շրջափակին մէջ կատարուեցաւ մա-տաղօրինքը:

ԼՕԽ-Ի «ԱՂԹԱՄԱՐ» ՄԱՍՆԱԾԻՂԻ ՏՈՀՄԻԿ ԵՐԵԿՈՆ ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ԽՐՈԽՏ ՈՒ ՀԱՐԱԶԱՏ ՄԹՆՈԼՈՐՏԸ ԿԵՆԴԱՆԱՑՈՒՑ ԱՅՆՃԱՐԻ ՄԷՋ

Հովանաւորութեամբ ԼՕԽ-ի Շրջանային վարչ-ութեան եւ կազմակեր-պութեամբ ԼՕԽ-ի «Աղթա-մար» մասնաճիւղին, ա-ւանդական դարձած տոհ-միկ երեկոն տեղի ունեցաւ Մուսա Լերան հերոսա-մարտի 111-ամեակի եւ Այնճարի հիմնադրութեան 87-ամեակի առթիւ կազ-մակերպուած ոգեկոյման ձեռնարկներու շարքին, ուրբաթ, 18 սեպտեմբեր 2026-ին, երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ, ՀՄԸՄ-ի Այնճարի «Կայծակ եւ Ծո-վիկ Չէլթեան» մարզահամալիրին մէջ՝ պատկան մարմիններու եւ միութիւններու ներկայացուցիչնե-րուն եւ մեծաթիւ հայրենակիցներու ներկայութեամբ:

Լիբանանի, Հայաստանի, Արցախի եւ ՀՕՄ-ի քա-լերգներուն յաջորդեց ԼՕԽ-ի «Աղթամար» մասնա-ճիւղի բարի գալուստի խօսքը, զոր արտասանեց



համայնքային կեանքին, անդամագրուելով ԼՕԽ-ի «Աղթամար» մասնաճիւղի շարքերուն, որովհետեւ անոնց եռանդը, գաղափարները եւ ներկայութիւնը նոր շունչ պիտի հաղորդեն մասնաճիւղի աշխա-տանքներուն:

Աւարտին ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնց աջակցութիւնն ու վստահութիւնը ուժ



մասնաճիւղի ատենապետ Աշխէն Գազանճեան: Ան դիտել տուաւ, որ ավանդութեան վերածուած ԼՕԽ-ի այս տոհմիկ երեկոն կը համախմբէ ժողովուրդ-ը՝ միասին յիշելու մեր հերոսական անցեալը, ապրե-լու մեր ավանդութիւնները եւ զանոնք կենդանի պա-հելու ու փոխանցելու նոր սերունդներուն: Ա. Գա-զանճեան յայտնեց, որ երեկոյին առանձնայատուկ-ութիւնն է ԼՕԽ-ականներուն կողմէ պատրաստուած Մուսա Լերան ավանդական ուտեստներն ու խմորե-ղէները, որոնք մեզի հասած են մեր մայրերէն ու մեծ մայրերէն եւ պահպանուած՝ սերունդէ սերունդ:

Աշխէն Գազանճեան անդրադարձաւ նաեւ ԼՕԽ-ի առաքելութեան՝ ըսելով, որ միութիւնը տարիներ շա-րունակ ծառայած է ու կը շարունակէ ծառայել գիւղի ժողովուրդին՝ հոգալով անոր կարիքները, ըլլան անոնք առողջապահական, ընկերային, կրթական, ձեռարուեստի փոխանցման (կամ ուսուցման) մար-գերուն մէջ: Ան կոչ ուղղեց նաեւ Այնճարի երիտա-սարդներուն՝ իրենց մասնակցութիւնը բերելու գիւղի



կու տան շարունակելու աշխատանքը եւ իրականու-թիւն դարձնելու նման գեղեցիկ ձեռնարկներ:

Ապա երեկոյին հաղորդավարը՝ Սեւան Կարապե-տեան-Անդանեան, ողջունեց ներկաները, շնորհակա-լութիւն յայտնեց ԼՕԽ-ականներուն, որոնց ջանքերով ոչ միայն անգամ մը եւս տոհմիկ երեկոն կազմակեր-պուեցաւ, այլ անկիւս վերածուեցաւ մշակոյթի, միու-թեան եւ ոգեկոյման խորհուրդի:

Ապա ընթացքին տեսերիզի վրայ ցուցադրուեցան ԼՕԽ-ի «Աղթամար» մասնաճիւղի նուիրեալ անդամ-ներուն տոհմիկ երեկոյի նախապատրաստական աշ-խատանքները, որոնք կատարուեցան մասնաճիւղի «Ֆիլիանեսեան» կեդրոնին մէջ:

Այնուհետեւ ԼՕԽ-ի Շրջանային վարչութեան խօս-քը արտասանեց Սիւզի Նաշալեան, որ յատկանշա-կան նկատեց այն, թէ տոհմիկ երեկոն համախմբած է բոլոր տարիքի հայորդիներ, որոնք նաեւ եկած են

Շար.ը՝ էջ 6

ՊԻՏԻ ՊԱՀԵՆՔ ԱՅՆՃԱՐԸ, ՊԻՏԻ ՊԱՀԵՆՔ ՄԵՋԻ ԺԱՌԱՆԳՈՒԱԾ ՄԵՐ ՀՈՂԸ, ՊԻՏԻ ՊԱՀԵՆՔ ՄԵՐ ՀԱՅԵՑԻ ԴԻՄԱԳԻԾԸ*

Այսօր, այս գեղեցիկ տոհմիկ երեկոյին, որ կազմա-կերպուած է մեր սիրելի ԼՕԽ-ականներուն կողմէ, ՀՀԴ «Կարմիր Լեռ» կոմիտէին անունով կ'ողջունեմ բոլորը եւ իմ խորին երախտագիտութիւնս կը յայտ-նեմ այն բոլոր կիներուն, որոնք տարիներէ ի վեր իրենց ժամանակը, ուժը, միջոցները եւ, ամենէն կա-րեւորը, իրենց սիրտը կը գոհաբերեն մեր գիւղին, մեր ընտանիքներուն եւ մեր համայնքային կեանքին հա-մար:

ԼՕԽ-ի աշխատանքը շատ անգամ լուռ է: Միշտ չէ, որ անկիւս բեմի վրայ կը տեսնենք, բայց անոր ետին կան՝ հսկայական աշխատանք, կազմակերպուածու-թիւն եւ զոհողութիւն: Այսօրուան նման երեկոներուն ետին ալ կան՝ օրերու նախապատրաստութիւն, աշ-խատանք ու նուիրում: Ձեր վարձքը կատար՝:

Սակայն այսօրուան մեր հանդիպումը անելի խոր իմաստ մը ունի: Մենք այստեղ կը գտնուինք Մուսա Լերան հերոսամարտի 111-րդ տարեդարձին առի-թով: 111 տարիներ առաջ Մուսա Լերան մեր ժողո-վուրդը կանգնեցաւ պատմութեան առջեւ եւ ըսաւ. «Մենք պիտի չհեռանանք, պիտի չհրաժարինք մեր ինքնութենէն, պիտի պաշտպանենք մեր գոյութիւնը եւ մեր արժանապատուութիւնը»:

Այդ ոգին Մուսա Լեռնէն եկաւ եւ հասաւ մինչեւ այս-տեղ՝ Այնճար: Այնճարը պարզապէս գիւղ մը չէ: Այն-ճարը Մուսա Լերան ժառանգութիւնն է: Այս հողին վրայ մեր նախահայրերը եկան ոչ թէ միայն ապրելու, այլ նաեւ՝ հայկական կեանք ստեղծելու: Անոնք այս-տեղ տուն կառուցեցին, դպրոց հաստատեցին, եկե-ղեցի շինեցին, ակումբներ հիմնեցին եւ, ամենէն կա-րեւորը, իրենց զաւակներուն փոխանցեցին հայ ըլլա-լու գիտակցութիւնը:

Եւ այսօր այդ բոլորը մեզի վստահուած է: Բայց պէտք է մէկ բան շատ յստակ ըսենք: Մենք այս հողին տերը չենք այն իմաստով, որ կրնանք զայն առնել ու ծախել մեր ուզած ատեն: Մենք այս հողը ժառանգած ենք մեր հայրերէն, մեր մայրերէն, մեր պապերէն՝ անոնց զոհողութիւններուն իբրեւ արդիւնք, իսկ ժա-ռանգութիւնը սեփականութիւն մը չէ միայն, այլ պա-տասխանատուութիւն է:

Ուստի, երբ հայկական հողի մը մասին կը խօ-սինք, երբ Այնճարի հողին մասին կը խօսինք, պէտք է գիտակցինք, որ զայն դրամի դիմաց ծախելը, պարզ տնտեսական գործարքի վերածելը, մեր ազգային պատասխանատուութեան ոգիին հետ չի կրնար հաշտուիլ:

Այս խօսքը մէկ անձի ուղղուած չէ: Այս խօսքը մէկ



ընտանիքի ուղղուած չէ: Այս խօսքը բոլորիս ուղղ-ւած է, որովհետեւ եթէ մենք չպահենք մեր հողը, ո՛ր պիտի պահէ: Եթէ մենք չպահենք Այնճարի հայեցի դիմագիծը, ո՛ր պիտի պահէ: Եթէ մենք մեր սերունդ-ներուն չփոխանցենք այն, ինչ որ մեզի փոխանցուե-ցաւ, ի՞նչ պիտի ժառանգեն անոնք մեզմէ:

ՀՀԴ «Կարմիր Լեռ» կոմիտէն այս պատասխանա-տուութիւնը շատ լուրջ կը գիտակցի: Այնճարը կը վա-րելէ «Կարմիր Լեռ» կոմիտէի հովանաւորութիւնն ու աջակցութիւնը՝ ամէն ձեւով, ամէն տեղ, դաշնակցա-կան զոհողութեան բարձր գիտակցութեամբ:

Եւ ասիկա միայն խօսք չէ: Մեր պարտականութիւնն է՝ կանգնիլ մեր ժողո-վուրդին կողքին, պաշտպանել գիւղին շահերը, գօ-րացնել հայկական կեանքը, պահպանել մեր կառոյց-ները եւ ամրացնել ամէն ինչ, որ դար մը առաջ մեզի վստահուեցան:

Բայց կոմիտէն առանձինն չի կրնար այս պարտա-կանութիւնը կատարել: Այս պայքարը մեր բոլորինն է: Այս գիւղի իւրաքանչիւր ընտանիք դեր ունի: Իւրաք-քանչիւր ծնող դեր ունի: Իւրաքանչիւր երիտասարդ դեր ունի: Իւրաքանչիւր կառոյց դեր ունի: Եւ այո՛ր, իւ-րաքանչիւր հողատեր ար ինչ պատասխանատուու-թիւն, որովհետեւ այսօր եթէ հողը կորսնցնենք, վաղը կարելի չէ զայն վերստին գնել, այն իմաստով, որ հո-ղը կարելի է գնել, բայց ժառանգութիւնը չի՝ զնուիր: Հողը կարելի է վաճառել, բայց կորսուած հայրենիքը դրամով չի՝ վերադարձուի:

ՇԱՐՆ ՓԱՆՈՍԵԱՆ

Շար.ը՝ էջ 6

Դ. ՂԱՍԱԿԱՐԳԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ` ՀՄԸՄ ՊԷՅՐՈՒԹ - ՇԱՊԱՊ ՍԱՔԱՖԻ ՀԵՐԻ

Այսօր յետմիջօրեի ժամը 3:00-ին, Սաֆայի դաշտին վրայ, ՅՄԸՄ Պեյրուֆ վճռական մրցում մը ունի կատարելիք Գ. դասակարգ բարձրանալու առումով, ուր պիտի մրցի Շապաֆի Զերիի դէմ:

Վերջին անգամ 2021-ին էր, որ ՅՄԸՄ Պեյրուֆ մաս կը կազմէր Գ. դասակարգին, բայց Նոյն տարեշրջանի աւարտին ինկած էր Դ. դասակարգ:

Տարիներէ ի վեր կատարուած ձախող փորձերէ ետք, այս տարի տղաքը լրջօրէն կը պայքարին բարձրանալու Գ. դասակարգ:

Ճիշդ 2 ամիս առաջ ՅՄԸՄ կատարած էր իր տարեշրջանի իր առաջին մրցումը եւ իր կատարած 9 մըրցումներուն 8 յաղթանակներ արձանագրած էր՝ Նշանակելով 31 կոլ եւ ստանալով 8 կոլ:

Պետք է ըսել, որ իր վերջին մրցումին (անցեալ կիրակի) ան ստացած էր 4 կոլ՝ հիւսիսի ախոյեան Արապի Աքքար Ռիատի խումբին դէմ մրցումին:

Այժմ մրցակիցը հիւսիսէն է, բայց վստահաբար բարձրանալու համար չէ, որ կը խաղայ, մանաւանդ որ 4 կետերով ան կը գրաւէ 4-րդ դիրքը:

Ասիկա անշուշտ ըսել չէ, որ մրցակիցը թոյլ մրցում մը կրնայ կիրարկել: Մե՛նք պետք է աւելի լաւ խաղանք, եւ 11 մարզիկները մէկ մարդու նման պետք է պայքարին դաշտին վրայ՝ յաղթանակ արձանագրելու եւ բարձրանալու համար 3-րդ դասակարգ: Թուաբանական հաշիւներով կրնայ հաւասարութիւն մըն ալ բաւարար ըլլայ, բայց ասիկա բնաւ լաւ կետ մը չէ, մանաւանդ, որ պատմութիւնը միշտ կը վկայէ, թէ բոլոր այն խումբերը, որոնք հաւասարութիւն արձանագրելու համար դաշտ կը ներկայանան, պարտութեամբ կը մեկնին դաշտէն: Մենք պետք է պայքարինք 90 վայրկեան՝ 3 կետ շահելու համար, հոգ չէ թէ միւս արդիւնքները որուն հաշուոյն կրնան ըլլալ: Զանակիրներն ալ պետք է անպայման ներկայ գտնուին դաշտ՝ երիտասարդ խումբին օգնելու անցեալ շաբաթուան անակնկալ պարտութենէն դուրս գալու: Բոլոր



անոնք, որոնք առիթ ունին ներկայանալու, թե՛ Սաֆայի դաշտին մուտքը ազատ է, թե՛ ալ փոխադրականները ձրիաբար պիտի փոխադրեն համակիրները:

Յոյսով, որ ժամը 5:00-ին ՅՄԸՄ-ի մարզիկները համակիրներուն հետ յաղթական վերադառնան Պուրճ Նամուտ եւ յառաջիկայ տարեշրջանին մաս կազմեն Գ. դասակարգին:

ԸՄՔԱՍՄԱՐՏ

ԱՐՍԷՆ ԶՈՒԼՖԱՆԱԿԵԱՆ ՈՍԿԻ ՄԵՏԱԼ ՆՈՒԱՃԵՑ... ԱՐԺԱՆԹԻՆԻ ՀԵՏ



Արժանթինի Ռոզարիօ քաղաքին մէջ ընթացող «Սանթա Ֆէ-2026» Զարաւային Ամերիկայի խաղերուն, Յունահռոմէական ոճի ըմբշամարտի մրցաշարքը առանձնացաւ պատմական իրադարձութեամբ: 39 տարեկան յայտնի հայ ըմբիշ Արսէն Զուլֆալյանեան, որ աշխարհի ախոյեան եւ Ողիմպիական խաղերու Լոնտոնի արծաթ մետալը շահած է, ներկայացուցած է Արժանթինը եւ շահած 77 թիւ կշիռի տիտղոսը:

Աւարտականին Զուլֆալյանեան 4-2 արդիւնքով տպաւորիչ յաղթանակ տարած է բոլոմպիացի հայիր Զուլերոյի նկատմամբ՝ վրէժի մրցում կատարելով խմբային առաջին հանգրուանին պարտութիւն կրելէ ետք: Այս մետալը պատմական նշանակութիւն ունէր Արժանթինի համար: Երկիրը վերջին 16 տարիներուն Զարաւային Ամերիկայի խաղերուն յունահռոմէական ըմբշամարտի ոսկիէ մետալ չէր նուաճած:

«Արժանթինի այս երկար տարիներու դադարը յաւելեալ ուժ տուաւ յաղթելու թե՛ ինծի, թե՛ Արժանթինի: Անհատաւոր գագաթն է», ըսաւ հայ ըմբիշը մրցաշարքէն ետք:

Արսէն Զուլֆալյանեանի անունը հայկական մարզական աշխարհին մէջ կանուխէն արդէն գրուած է ոսկի տառերով: Մնած 1987-ին, Գիւմրիի մէջ, 1988-ին Սեւուի ողիմպիական խաղերու ախոյեան Լեւոն Զուլֆալյանեանի ընտանիքին մէջ, Արսէն կրցաւ կերտել իր սեփական փառաւոր ուղին: 2009-ին ան դարձաւ Եւրոպայի, իսկ 2014-ին աշխարհի ախոյեան, սակայն 2012-ին Լոնտոնի Ողիմպիական խաղերու ար-



ծաթէ մետալը անոր ասպարեզին համար եղաւ շրջադարձային:

Կը թուէր, որ 2021-ի յուլիսին, Թեքիոյի 2020-ի Ողիմպիականի գտումի մրցումներու պահուն, հաւաքականին մէջ տրուած վճռական որոշումներէն եւ քաղաքականութիւն մուտք գործելէ ետք, անոր մարզական ասպարեզը աւարտած էր:

Սակայն 2023-ին Չուիցերիոյ մէջ ունեցած հանդիպումը արժանթինցի Նախկին ողիմպիական ըմբիշ Եուրի Մայերի հետ, որ այժմ Ըմբշամարտի միջազգային ֆետերասիոնի պաշտօնեան է ամէն ինչ փոխեց:

«Զե՛ս ցանկար թու մասնակցելիք 4-րդ Ողիմպիական խաղերուն ներկայացնել Արժանթինը», Մայերի անսպասելի առաջարկը անգամ մը եւս արթնցուց Զուլֆալյանեանի մարզական կարօտը:

Վերադարձը դիւրին չէր: Ան կը պատրաստուէր Փարիզի 2024-ի Ողիմպիականի գտումի մրցումներուն մասնակցիլ, բայց անոր վիրաւորուիլը յետաձգեց այդ մէկը: Մէկ տարուան ապաքինումի ժամանակաշրջանէ անցնելէ ետք, ան 2025-ին Մոսկթերի մէջ «Փան Ամերիքան» խաղերու արծաթ մետալը նուաճեց:

Այժմ ան ոսկի մետալ նուաճելով մտադիր է 2028-ի Ողիմպիականի խաղերու (Լոս Անճելըս) մասնակցիլ Արժանթինի հետ: Արսէն Զուլֆալյանեան 39 տարեկան է, բայց տակաւին ունի պայքարի ոգին:

Պետք է նշել, որ Արժանթինի ներկայացուցիչ Ռիքարտո Նաուել Կոմես 97 թիւ կշիռի արծաթէ մետալը նուաճեց 21 տարեկան հասակին:

ԱՉԳԵՐՈՒ ԼԻԿԱ

ԱՅՍՕՐ` ՀԱՅԱՍՏԱՆ - ԼԱԹՎԻԱ

Այսօր, Պեյրուֆ ժամանակացոյցով ժամը 19:00-ին, Զայաստանի հաւաքականը Ազգերու լիկայի 2026-2027 տարեշրջանի իր առաջին մրցումին պիտի հիւրընկալէ Լաթվիան:

ՖԻՖԱ-ի ընդհանուր դասաւորման մէջ Զայաստանն այժմ 107-րդ դիրքը կը գրաւէ, մինչ մրցակից Լաթվիա 137-րդ դիրքին վրայ է:

Զայաստան մեծ դժուարութիւններու առջե կը գտնուի, մանաւանդ որ 8 մարզիկներ վիրաւորուած են, բան մը, որ պիտի դժուարացնէ մարզիչ Եդիշէ Մելիքեանի գործը:

«Ժողովուրդ» ալիքը հրապարակած էր Մելիքեանի հետ ունեցած իր հարցազրոյցը, ուր վերջինս վշտացած էր բոլոր անոնցմէ, որոնք չէին ուզեր մաս կազմել ազգային խումբին:

«Աւելի լաւ է ունենալ անփորձ ֆուլպուիստներ, քան փորձառու, բայց պատերազմի դաշտէն փախուստ տուած խաղողներ», ըսած է ան:

«Մէկ բան զիս շատ կը նեղացնէ՝ մեր ֆուլպուիստները, որոնք տակաւին կրնան իրենց ակումբներուն հետ խաղալ, բայց կը հրաժարին խաղալ հաւաքականին հետ: Անոնք պատճառներն ու փաստերը ինծի ընդհանրապէս չեն համոզեր: Ես ինքս խաղցած եմ ազգային խումբէն եւ շատ բան տեսած: Կը յիշեմ Ռոման Խաչատրեանը,



երբ դաշտ կը ներկայանար ուռած ոտքով, եւ Նոյնիսկ ոտքին չէր մտնէր անոր խաղակօշիկը: Տեսած եմ, թէ ինչպէ՛ս Արթուր Պետրոսեան ծունկէն վիրաւոր կը խաղար՝ մոռնալով իր ցաւերը: Արմէն Շահգեղեան եւ Նոյնպէս Սարգիս Յովսէփեան մինչեւ վերջին շունչ ազգային խումբին նուիրուած էին: Աւելի լաւ է երիտասարդներուն սորվեցնեմ մինչեւ վերջ զենքը ձեռքին յառաջ երթալ: Ինծի այդպիսի մարդիկ պետք են: Ես շատ զայրացած եմ վճռացած եմ, բայց հաւաքականը թող մաքրուի: Ֆուլպուիստներ տարբեր պատճառներ կը նշեն: Մինչեւ իսկ մէկը ըսած է, որ հետոս հարց ունի: Ես ռեւէ մեկուն հետ հարց չունիմ եւ չեմ ունեցած: Թող զայ աչքերուս նայելով ըսէ, որ մեր միջեւ հարց կայ: Եթէ իրենց պատճառներով պիտի չգան, թող հեռանան: Ես կը հաւաքեմ իմ մարզիկներս: Եթէ պարտուիմ, թող այդպէս ըլլայ, եթէ յաղթեմ՝ լաւ:

Շար.ժ` էջ 8

ԲՈՆՁԵԱՍՄԱՐՏ

ՀԱՅԱՍՏԱՆ 2 ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼՆԵՐՈՎ ԱՒԱՐՏԻԵՅ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Եւրոպայի բոնցքամարտի ախոյեանութիւնը այսօր կ'աւարտի: Սոֆիայի (Պուլկարիա) մէջ տեղի ունեցած մրցումներուն, Զայաստանի հաւաքականը արդէն իսկ աւարտած է իր ելոյթները:

Զառորդ աւարտականին հասած 4 մարզիկներն երկուքը կրցան պրոնզէ մետալներ շահիլ:

Էլիդա Զոգարեան մինչեւ 65 թիւ կշիռի կիսաւարտականին 5-0 արդիւնքով պարտութիւն կրած էր ռուս Ազալիա Ամինեալյէն: Ռուսոյ՛ Գարբոյեան մինչեւ 50 թիւ կշիռի մըրցումներուն իր կարգին 5-0 արդիւնքով պարտութիւն կրեց ռուս Պայիր Պաթլայեանէ:

Արթուր Բազեան մինչեւ 60 թիւ կշիռի ջառորդ աւարտականին 1-4 արդիւնքով պարտութիւն կրեց Մակեդոնիայի ներկայացուցիչ Ալեն Ռուտեմովքիէն: Մինչեւ 75 թիւ կշիռի մրցում-



Էլիդա Զոգարեան

ներուն Մարատ Միքայելեան 2-3 արդիւնքով պարտուեցաւ անգլիացի Զաւրմ Մաքիսի դէմ մենամարտին:

Ասիկա երեք անգամ Եւրոպայի երիտասարդներու ախոյեան Զոգարեանի առաջին մետալն է իր առաջին մասնակցութեան՝ մեծերու մրցաշարքին:

ՃԱՏՐԱԿ

- ՌՈՊԵՐԹ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՅԱԳԹԵՑ ՈՒԵՁԼԻ ՍՈՅԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՒԱՍԱՐԵՑԱԻ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՀԵՏ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂԶԱՆՑ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ՅԱԳԹԵՑ ԱԶՐՊԷՅՃԱՆԻՆ

Ճատրակի 46-րդ Օլիմպիատայի 7-րդ հանգըրւանի մրցումներուն, տղոց հաւաքականը 2-2 արդիւնքով հաւասարութիւն խլեց Միացեալ Նահանգներէն:

Վճռորոշ եղաւ Ռոպերթ Յովհաննիսեանի յաղթանակը սեւ խաղաքարերով՝ աշխարհի թիւ 5 մարզիկ Ռեզլի Սոյի դէմ:

Զանդիպումը Զայաստանի հաւաքականին համար բաւական դժուար եղաւ: Զայկ Մարտիրոսեան եւ Շանթ Սարգսեան իրենց մրցումները հաւասարութեամբ աւարտեցին յաջորդաբար Ճապիանո Ջարուանայի (թիւ 3) եւ Զանա Նիմանի (թիւ 21) դէմ: Գաբրիէ Սարգսեան պարտութիւն կրեց Էվոնտեր Լիանի դէմ մրցումին, բայց Ռոպերթ Յովհաննիսեան փրկեց կացութիւնը (1-0):

Եօթը հանգրուանէ ետք Զայաստան ունի 14 կարելի կետերն 12-ը եւ խըմբային դասաւորման մէջ կը գրաւէ 3-րդ դիրքը:



Աղջկանց 7-րդ հանգրուանի մրցումներուն, Զայաստան 2,5-1,5 արդիւնքով յաղթեց Ազրաբեյճանին:

Լիլիթ Սկրտչեան եւ Էլիսա Դանիէլեան իրենց մրցումները յաղթեցին, մինչ Մարիամ Սկրտչեան հաւասարութիւն արձանագրեց Կոփար Պետուկայեայի հետ:

Սուսանա Գաբոյեան պարտութիւն կրեց Կիլեսար Մամետովայէն: Զայաստան կարելի 14 կետերն ունի 12 կետեր եւ աղջկանց ընդհանուր դասաւորման մէջ մնաց 7-րդ դիրքին վրայ:

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ՀԵՏ ՄԵՍՍԻԻ «ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ...»

Ամերիկեան Ինթեր Մայեմիի 39 տարեկան յառաջապահ Լիոնել Մեսսի ընկերային ցանցերու իր էջերուն վրայ անդրադարձած է Արժանթինի ազգային խումբին հետ իր միջազգային ասպարեզի աւարտին՝ գրելով. «Վերջին հանդիպումը. մարզաշապիկ՝ ամբողջ կեանքի համար»:

Մեսսի ազգային խումբին հետ իր երաժեշտի հանդիպումը պիտի կատարէ 6 հոկտեմբերին: Պուէնոս Այրեսի մէջ Արժանթին պիտի մրցի Պե-



«Ալպիսեյետեթ»-ի շապիկով Լիոնել Մեսսի 207 մրցումներ կատարած է՝ Նշանակելով 125 կոլ եւ 68 եսիսք:

Ազգային խումբին հետ ան կրցած է մոնտիալ մը (2022) եւ երկու անգամ «Քոփա Ամերիքա»-ի բաժակը շահիլ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԷ ...

Շարունակում Լ. Էջէն

Ֆինանսական անթափանցիկությունը եւ եկեղեցապատկան գոյքի ոչ նպատակային օգտագործումը,

- ազգակցական ձեռնադրությունները եւ խմբակային կառավարումը,
- Սուրբ խորանի քաղաքականացումը եւ արտաքին ազդեցություններու տարածումը,
- Ազգային-եկեղեցական ժողովի 27-ամեայ խափանումը եւ միասնական Սահմանադրութեան բացակայությունը,
- պառակտումները սփիւռքի թեմերուն մէջ:

Այս գեկուցումին մէջ կը ներկայացուին նաեւ պնդումներ, որոնց շարքին՝ հոգեւորականներու սեռային կեանքին վերաբերեալ մանրամասնութիւններ, որոնք հիմնականին մէջ հիմնուած են Գարեգին Բ. կաթողիկոսէն տարբեր պատճառներով դժգոհ տարբեր հոգեւորականներու հարցազրոյցներուն վրայ: Թէեւ Առաքելական եկեղեցին իր տնօրինած գոյքին բերումով Հայաստանի մեծ հարկատուներէն է, սակայն գեկուցումին մէջ նաեւ ծաւալուն անդրադարձ կայ ֆինանսական թափանցիկութեան խնդիրներուն:

Մայր Աթոռը Կը հակադարձէ

Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը յայտարարեց, որ «կառավարութեան կողմէ հրապարակուած Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ մասին այսպէս կոչուած գեկուցումը իր բովանդակութեան եւ ձեւին մէջ հակասահմանադրական է, հակակնոնական եւ անօրինական»:

«Պետական միջոցներու մսխումով՝ ընկերային ցանցերու եւ լրատումի միջոցներու մէջ հրապարակուած մեղադրանքներու ու յերիւրանքներու հիման վրայ շարադրուած «գեկուցումը» դրսեւորում է քաղաքական հաշտեյարդարի, քննախընդրութեան եւ եկեղեցւոյ ներքին կեանքին դատապարտելի միջամտութեան», կը պնդէ Մայր աթոռը:

«Եկեղեցւոյ տկարացման, եկեղեցականութեան հեղինակագրկման համար որդեգրուած տյն դատապարտելի քաղաքականութիւնը երբեք չի կըրնար ծառայել հայրենիքի եւ աշխարհասփիւռ մեր ժողովուրդի բարիքին, միասնականութեան ամրապնդման, առաւել եւս արտաքին անվտանգային սպառնալիքներու յանդիման՝ առկայ փորձութիւնների դիմագրւամանը», նշուած է յայտարարութեան մէջ:

«ԲԱՂԱԲԱՅԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»-Ի ՊԱՏԳԱՄԱՌՈՐՆԵՐԸ ...

Շարունակում Լ. Էջէն

Քննարկման ներկայ միջազգային իրաւունքի մասնագետ Արա Ղազարեան այս դեպքին անդրադառնալով՝ նշեց, որ «Քաղաքացիական պայմանագիր»-ի պատգամաւորներուն քայլը կը յիշեցնէ միջազգային կառոյցներուն մէջ ազրպէյճանցիներուն վարքը, երբ անոնք եւրոպական կառոյցներու մէջ կը պահանջեն չյիշատակել Արցախը:

«16 տարի է Ազրպէյճանի դէմ վարոյթներում եմ, հենց առաջին գործերից Ազրպէյճանը պահանջում էր եւրոպական դատարանից չօգտագործել Արցախի հայկական անունումները, պետական, հանրային մարմինների փաստաթղթերը: Հենց առաջին օրուանից եւրոպական դատարանը մերժել է, որովհետեւ գործում էր հանրային իրաւունքը, եւրոպական դատարանը նոյնիսկ Արցախի դատարանների որոշումներն է ճանաչել օրինական որոշումներ եւ դրանց հիման վրայ որոշումներ կայացրել: Գուցէ զուգահեռս տեղին չէր, բայց կարծում եմ՝ կան աղերսներ», դիտել տուաւ Ղազարեան:

Քննարկման ընթացքին նախ խօսք առաւ «Հայաստան» խմբակցութեան քարտուղար Արթուր Խաչատրեան, որ ընդգծեց՝ արցախցիները մինչեւ իրենց վերադարձի իրաւունքի իրացումը Հայաստանի մէջ պէտք է ապրին բարեկեցիկ պայմաններու մէջ: Այդ առումով ըսաւ՝ թիւ մէկ խնդիրը բնակարանային ապահովման հարցն է:

«Արցախ» միութեան ղեկավար Արտակ Բեգլարեան նոյնպէս շարք մը հարցերու կարգին առանձնացուց բնակարաններու հարցը: Նշեց՝ իրավիճակը ծայրայեղ վատթարացաւ, երբ պետութիւնը դադրեցուց վարձքերու վճարումներ տրամադրելը: Ըստ անոր, արցախցիներուն մօտ աղքատութեան ցուցանիշը կը հասնի 60-70 տոկոսի: Նոյնքան աշ-

խատումակ արցախցիներ անգործ են:

Բեգլարեան յատուկ կերպով առանձնացուց ատելութեան խօսքն ու արտայայտութիւնները արցախցիներուն նկատմամբ՝ նշելով, որ այս հարցը պէտք է ըլլայ պետական հոգածութեան ներքեւ, ոչ թէ պաշտօնատարները իրենք հանրայնացնեն ատելութեան խօսք: Մեղադրեց իրաւապահները՝ այս հարցով ընտրողաբար գործելու մէջ:

Դժգոհելով քաղաքացիութեան ձեռք բերման ժամկետներէն՝ Բեգլարեան ըսաւ, որ յունուարին ներկայացուած դիմումները հաստատուած են յուլիս-օգոստոսին: Ընդունեց՝ կայ լիազօր մարմնի ծանրաբեռնուածութեան հարցը, բայց շեշտեց՝ պետութիւնը պէտք է բաւարար քայլեր գործադրէ, որովհետեւ քաղաքացիութեան ձեռք բերումը ուղիղ կապ ունի բնակարան ձեռք բերելու հարցին հետ:

«Հայաստան» դաշինքէն Գեղամ Մանուկեան իր կարգին դիտել տուաւ, որ ցարդ հաստատագիր ստանձնած է 8 հազար հոգի, սակայն օգտագործած է ընդամենը կէսը՝ 4 հազարը: Ըստ անոր, դիւրին ընթացած է հանրակրթական ոլորտին մէջ համարկումը, սակայն վիճակը այնքան ալ յուսադրող չէ բարձրագոյն կրթութեան պարագային:

Լիլիթ Գալստեան իր կարգին շեշտեց, որ արցախցիներուն հարցերը այնքան լուրջ են, այնքան խորն են, այնքան համաատարած են, որ անոնք ամէնօրեայ ուշադրութեան, լուծման անհրաժեշտութիւն ունին:

«Այսօր Ազգային ժողովում քննարկելու ենք մեր ժողովրդի համար շատ կենսական հարցերի մի մեծ շրջանակ, որոնք վերաբերում են արցախահայերի ընկերային, տնտեսական եւ իրաւական այն մարտահրաւերներին, որ Նրանք դիմագրւում են այսօր՝ Հայաստանում:

Արցախի Հանրապետութիւնում Ազրպէյճանի կողմից իրականացուած հետեւողական յարձակումին եւ ցեղասպանական գործողութիւնների արդիւնքում մեր հայրենակիցները գրեթէ ուղիղ երեք տարի առաջ ենթարկուեցին ցեղասպանական գործողութեան, բնիկ գտման եւ 120.000 մեր հայրենակիցներ հարկադրուած էին լքել իրենց հազարամեակների բնօրրանը եւ ապաստան գտնել հայրենիքում: Բնիկ տեղահանումը բնականաբար մարդասիրական, իրաւական, ընկերային, տնտեսական, մշակութային, հոգեբանական բազմաթիւ եւ բազմաշերտ խնդիրներ առաջացրեց», մանրամասնեց ան:

Լիլիթ Գալստեան շեշտեց, որ այսօր արցախցիները, հակառակ բազում խնդիրներուն, տակաւին կը շարունակեն գոյատեւել: «Անցնող երեք տարիների ընթացքում այդ խնդիրները արժեւորման, վերլուծման կամ գնահատման չեն ենթարկուել», ընդգծեց ան:

ԱՅՍՕՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆ - ԼԱԹՎԻԱ

Շարունակում 7-րդ Էջէն

Առնուազն կը գիտնամ, թէ որովհետ կ'անցնեմ այդ ճամբան: Իւրաքանչիւր ֆութպոլիստ պէտք է հասկընայ, որ հաւաքականը ո'չ կը պատկանի ֆետերասիոնի նախագահին եւ ո'չ ալ մարզիչին: Ատիկա երկրին խումբն է: Հաւաքականը կը պատկանի բոլորին՝ երեխաներուն, հայրերուն եւ մեծ հայրերուն: Պապիկը պէտք է իր թռնիկին հետ գայ դաշտ եւ ուրախանայ: Հաւաքականը կը պատկանի ամբողջ ազգին: Պէտք է խօսք մըն ալ ուղղեմ ակումբներուն, որոնք պէտք է առիթ տան լաւ հայ մարզիկներուն, որ դաշտ ներկայանան եւ փորձառութիւն շահին: Գիտեմ ակումբ մը, որուն անունը պիտի չտամ: Ունի հայ լաւ մարզիկ մը, որ դժբախտաբար չխաղալով մրցումի համար պատրաստ չէ, որ կանչեմ հաւաքական: Խօսք մըն ալ ֆետերասիոնին եւ նոյնիսկ կառավարութեան: Ինչպե՞ս կրնայ ըլլալ, որ Հայաստանի նման երկիր մը ունի միայն 1 օրինաւոր մարզադաշտ: Կ'ուզեցք

նմանիկ Վրաստանի: Գիտե՞ք, թէ Վրաստանի մէջ պետութիւնը քանի մարզադաշտ կառուցած է: Մեր միակ մարզադաշտը արդէն գրեթէ 100 տարեկան է: Մենք կը սիրենք մեզ համեմատել ուրիշին հետ: Մենք մէկ մարզադաշտ ունինք, մնացածը պարզ խաղադաշտեր են: Փա՛ռք Աստուծոյ, որ Նոա ակումբը սեփական ենթակառոյցով մարզադաշտ կը կառուցէ: Բայց ատիկա շատ քիչ է: Պետութիւնը պէտք է ատով զբաղի: Պետութիւնն ու վարչապետը պէտք է սիրեն ֆութպոլը, հոգ տանին անոր մասին եւ զարգացման ծրագիրներ ներդնեն», ըսաւ Մելիքեան:

Այսօր եւ Խաւիլա իր Նոր (հին) մարզիչին՝ Ռոպերթօ Մանչինիի հետ պիտի հիւրընկալէ Պելճիքան, որուն մարզիչն ալ՝ Մարք Վան Պոմբէ, Նոր նշանակուած է: Ֆրանսեան, Չինետին Չիտանի հետ, պիտի մեկնի Թուրքիա՝ մրցելու տեղւոյն ազգային խումբին դէմ:



ԱՅՍՕՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ
Radio Voice of Van - Վանայ Զայն FM: 94.7 Եւ 95 MHz

7.00- Զայլերգներ / Առաւօտ լուսոյ	Ժակ Տեր Գրիգորեան)
7.03- Առաւօտ լուսոյ / Բարի լոյս	2.05- Յեղափոխական երգեր
7.15- Հանդարտ երգեր	3.00- «Ուաքֆէ ու մաուաֆ».
7.30- «Երկու բարեւ»	(ուղիղ դիմատեսքով)
8.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ	4.30- Արաբերէն երգեր
9.00- «Երկու բարեւ»	5.00- «Վանայ Զայն»-ը երեկոյեան
9.30- «Բարեւ» հարցազրոյց. հիւր՝ Գարմէն Աճէմեան (ուղիղ՝ դիմատեսքով)	5.05- Խանդավառ երգեր
10.00- Լիբանանահայ երգիչներու կատարումով	5.30- Հայրենի խումբերու կատարումներ
10.30- Հայկական աշխարհի լուրեր (ուղիղ՝ դիմատեսքով)	6.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ
10.45- Եղանակներ	6.50- Լիանա եւ Կարեն Չաքարեաններու կատարումներ
11.00- «Հայրենատիրութիւն»՝ տղթթ. Յակոբ Այնթապեանի հետ (ուղիղ՝ դիմատեսքով)	7.30- Սփիւռքահայ երգիչներու կատարումներ
11.30- Սփիւռքահայ երգիչներու կատարումներ	8.00- Օրուան երգիչ (Սոնա Ռուբէնեան)
12.00- «Երգային քաղաքականութիւն»	8.30- Արդի մշակումով ժողովրդային երգեր
12.15- Լիանա եւ Կարեն Չաքարեաններու կատարումներ	9.30- Հայկական աշխարհի լուրեր (կրկ.)
1.00- Ազգային-հայրենասիրական երգեր	9.45- Սիրային երգեր
1.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ	11.00- Golden oldies
2.00- «Յիշատակելիները» (Խա-	12.00- «Յիշատակելիները» / Յեղափոխական երգեր
	2.00- Չուգերգներ
	3.00- Կրկնութիւններ
	4.15- Հայերէն այլազան երգեր
	6.00- Հանդարտ երաժշտութիւն

Չեր մնայուն ընկերակիցը

Radio Voice of Van:Live

DOWNLOAD









ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԽՆԱՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲՈՒՇ
ԴՈՎՏ. ԵՐՈՒԱՐԴ ԹՈՐՈՒԿԵԱՆ
ԳԻՐԳՈՐ ԱՆՈՋԵԱՆ
ՇՈՂԻԿ ԹՈՐՈՍԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ՝ ՇՈՂԻԿ ԹՈՐՈՍԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝ ՄԱՐԳՐԻՏ ԱԶԱՏԵԱՆ

«ԳԱՅԵԱՆԷ» ՊԱՐԻ ԵՒ ՊԱԼԷԻ ԴՊՐՈՑԻ ՊԱՐՈՒՍՈՅՅՆԵՐ՝
ԿԱՐԷՆ ՄԱԿԻՆԵԱՆ ԵՒ ԺԱԳԼԻՆ ՄԱՐԻՈՇԵԱՆ

«ԱՐԵԳ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻԶ՝
ՍԻԼԱ ՍՈՐՈՍՈՆԵԱՆ

«ԿԱՐԿԱԶ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳԶԱՒՈՒՄԻ ԽՄԲԱՎԱՐ՝
ՇՈՂԻԿ ԹՈՐՈՍԵԱՆ

«ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ» ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ԴՊՐՈՑԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻԶ՝
ՄԱՐԱՆ ՄԱՆԻՍ

«ԿԱՐՕՏ» ՀԱՅԵՐԷՆԻ ԴՊՐՈՑԻ ՌՍՈՒՅԻԶ՝
ՀՐԻՐԻ ՂԱԶԱՐԵԱՆ

«ՆԱՅԻՐԵԱՆ»
ՇՈՒԱԳԱՒՈՒՄԻ ԽՄԲԱՎԱՐ՝
ՄԻՍԱԲ ՊԱՂՊՈՆԱՐԵԱՆ

«ՄԵՂԵԴԻ»
ԼԱՐԱՅԻՆ ԶԱՌԵԱԿԻ ԴԵԿԱՎԱՐ՝
ԱՐՄԵՆ ԺԵՆՏԵՐԷՃԵԱՆ

«ՏԱՄԻՏՈՄ» ՏՀՈԱՀԱՐՆԵՐՈՒ ՀԱՄՈՅԹԻ ԴԵԿԱՎԱՐ՝
ՆԱՐԵԿ ՔԵՇԻՇԵԱՆ

ԿԻԹԱՌԱՀԱՐՆԵՐՈՒ ՀԱՄՈՅԹԻ ԴԵԿԱՎԱՐ՝
ՄԿՐՏԻԶ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒ՝
ՄԱՐԱՆ ՏԵՐ ՊՕՂՈՍԵԱՆ

ԱՐԳԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ԶԱՐՏՈՂԱՐՈՒԹԵԱՆ

«ԱՂԲԱՆԵԱՆ-ՀԱՐԱՆ» ՄԱՐԶԱՄԵՏԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԽՐ,
ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Ժ. ԵՒ Յ. ԽԱՀԱՏՈՒՐԵԱՆ»
ԿԵՐՈՒՆ, ՀՏԻ՝ 961 4 715491

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԼԵՒՈՆ ՇԱՆԹ» ՄԵՏԱԿՈՒԹԱՅԻՆ
ԿԼԱՐՈՒՆ, ՀՏԻ՝ +961 1 265899:

ՎԵՐԱՄՈՒՏ
2026-2027